

338(48)
21-68

ՀՈՄՅԵՐԻՏ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՐԴԻՄ ՍՄՈՒՇԿՈՎ

Ար. Կ. Կ. (Բ) ՏՆՏԵՍՍԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հանձնարարված և Համ. Լ. Կ. Պ. կ. թ.
Ազիտպոլիցիալ կողմից

Թուրքմ. Գ. Ա. Բ. Հ. Ա. Կ. Ա. Հ. Ա. Ն.

338(47)
U - 61

ՀՐԱՑԱՐԱԿԱՆԻ ԽՈՏԻ
ԵՐԵՎԱՆ — 1927

01.08.2013

29.227

338(47)

U-61

ԿՈՄՅԵՐԻՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՎԱՐԴԱՄ ՍՄՈՒՇԿՈՎ

ՀԱՅ. Կ. (Բ) Կ. ՏԵՏԵՍՈՒԿԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

ՀԵՄՈՒՆՔՆԵՐԸ

1003

Հանձնարարված ե Համ. ԼԿՅՒՄ-ի կ. կ. ի
Ազիտպողի կողմից

Թարգմ. ԳԱՐ. ՀԱԿՈԲՅԱՆ



Պետական Հրատարակչություն.—Երևան. 1927

1. Խ Ս. Հ. Մ.-Ի ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ, ՍՈՑԻԱԼԻԶՄԻ
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ
ՈՒԺԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Մեր տնտեսական շինարարության խնդիրն այն է, վոր վողջ տնտեսությունը սոցիալիստական ձևով կազմակերպելուն անցնենք։ Բայց մեր առաջ գրված խնդիրը պետք է լուծվի վոչ թե վերացականորեն, այլ ամբողջ ժողովրդական տնտեսությունը, սրա առանձին ճյուղերն ու վերջինների մեջև լեղած փոխադարձ հարաբերությունները հաշվառման յենթարկելու միջոցով։ Տնտեսական շինարարության, նոր հասարակակարգ ստեղծելու գործում վոչ մի ծրագիր կենսունակ լինել չի կարող, յերբ այդ ծրագիրը չի հենվում այն բոլոր հանդամանքների ճիշտ ընբռնման վրա, փորոնց մեջ պետք է աշխատել։

Կ. Մարքսը և Ֆ. Ենգելսը բաց են արել մեր առջև կապիտալիստական հասարակության և

տնտեսության ելությունը և մատնանշել են այն վերջնական նպատակը, վորին պետք է ձգտի պրոլետարիատը։ Լենինի մեծությունն այն է, վոր նա ցուց է տվել մեղ մեր տնտեսության շինարարության կոնկրետ ճանապարհը, տվել է մեղ մեր իրականության հաշվառման վրա կառուցված ծրագիր և պլան։

Հիմնականում մեր ամբողջ ծրագիրը պետք է կառուցվի պրոլետարիատի և զուղացիության միության վրա -քաղաքի և զուղի քաղաքական և տնտեսական շաղկապի վրա, այնպիսի պայմաններ ստեղծելու վրա, վորոնց մեջ ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը վարող պրոլետարիատը զուղացիությունն իր յետելց և տանում՝ վերակազմելով զուղացիական տնտեսությունը։ Այս խնդիրը պահանջում է ուժերի և ուշադրության հսկայական լարում, ամբողջ ժողովրդական տնտեսության ճիշտ հաշվառման և տնտեսության առանձին ճյուղերի զարգացման գործի ասպարիզում՝ համաձայնեցում։ Այս բարդությունը վորոշվում է տնտեսական ձևերի այն խալաբղետությամբ, վոր մենք ԽՍՀՄ-ում ունենք. այս բանն ընդգծել է Լենինը հեղափոխության հենց սկզբում, իսկ այսուհետեւ, կրկն անգամ, ՆԵՊ-ի սկզբում (նոր տնտեսական քաղաքականություն)։ Դեռ 1918 թ., յերբ նա առար-

կում եր, այսպես ասած, «Ճախ կոմմունիստների» սխալ քաղաքականության դեմ, վորոնք յերազում ելին անհապաղ սոցիալիզմ «մացնել», Լենինը մատնանշում եր Ռուսաստանի տնտեսության առանձնահատկությունները հաշվառման յենթարկելու ու անցողիկ շրջանի և իր կառուցվածքով բազմազան ամբողջ տնտեսությունն աստիճանաբար սոցիալիստականի վերածելու անհրաժեշտությունը։ Նա ասում եր.

«Կարծեմ դեռ չի յեղել այնպիսի մի մարդ, վորը Ռուսաստանի եկոնոմիկայի գործին նվիրվելով, ժխտած լինի այդ եկոնոմիկայի անցողիկ բնույթը։ Կարծեմ վոչ մի կոմմունիստ չի ժխտել և այն, վոր «Խորհրդային Սոցիալիստական Հանրապետություն» ասածդ նշանակում ե իրականացնել սոցիալիզմ՝ անցնելու՝ Խորհրդային իշխանության վճռականությունը, և վոչ թե արնաեսական տվյալ կարգերը սոցիալիստական կարգեր ճանաչել։

«Բայց ի՞նչ ե նշանակում անցում խոսքը։ Եկոնոմիկայի նկատմամբ կիրարկելիս այդ չի նշանակում, արդիոք, վոր տվյալ կարգերում կապիտալիզմի և սոցիալիզմի տարրեր, մասնիկներ, կտորտանք գոյություն ունեն։—Ամենըն ել խոստավանում են, վոր այս։ Սակայն այս բանը խոստավանելով հանդերձ, ամեն մարդ չի մտա-

ծում, թե ինչպիսի տարրեր են հենց իրենք՝ Ռուսաստանում Նադյ գոյովթյուն ունեցող զանազան հասարակական-անտեսական ձևի տարրերը:

«Իսկ հարցի ամբողջ առանցքն ել հենց այդ ե։
«Թվենք այդ տարրերը. —

1) տոհմական, այսինքն՝ զգալի չափով գյուղացիական բնատնտեսություն.

2) ապրանքային մանր արտադրություն (այս թվին ե պատկանում այն գյուղացիների մեծամասնությունը, վորոնք հաց են ծախում).

3) մամնավոր-տնտեսության կապիտալիզմ.
4) պետական կապիտալիզմ.

5) սոցիալիզմ։

«Ռուսաստանն այնքան ե մեծ և այնքան ե այլազան, վոր հասարակական-տնտեսական բոլոր այդ տարրեր ձեի տիպերը խճճվում են նրա մեջ։ Կացության առանձնահատկությունն ել հենց այս ե»։

Մեր տնտեսական քաղաքականության ապարիզում մենք պետք ե միացնենք յերկու անհրաժեշտ պայման. 1) ձգտել ժողովրդական տնտեսության արտադրողական ուժերի զարգացման և 2) տնտեսության առանձին ճյուղերի զարգացումն այնպես միացնել, վոր տնտեսության սոցիալիստական տարրերի պելի արագ

զարգացումն ու այս զարգացումը խանգարող հետամնաց ձևերի վտարումն ապահովված լինի։ Լենինը հաճախ ե ընդգծել այս միտքը, ասելով «նայած, թե ով ումը»։ Կկարողանա, արդյոք, մեր պետական սոցիալիստական տնտեսությունը ղեկավարել գյուղացիականին, նպաստել արտադրողական ուժերի զարգացմանը և վտարել մասնավոր կապիտալիստական տնտեսությունը, թե մասնավոր կապիտալն ուժեղ կզանվի, մեղ կիսարազանի, մեր հիմնական նվաճումները կկործանի և գյուղացիությանն իրեն ղեկավարությանը կենթարկի։ Ամբողջ տնտեսական քաղաքականությունը պետք ե կառուցվի ժողովրդական տընտեսության բոլոր վերոհիշյալ ճյուղերի ճիշտ և չչափաղանցրած հզորության հաշվառման վրա, այնպիսի հանգամահքներ ստեղծելու վրա, վոր ամբողջ տնտեսության արտադրողական ուժերն անընդհատ աճեն։

ՆԵՊ-ի ելությունը, մեր հիմնական խնդիրը նոր տնտեսական քաղաքականության պայմաններում այն ե, վոր պետական տնտեսությունն ամրապնդելու և զարգացնելու միջոցով նվաճենք մասնավոր տնտեսությունը, վոր պետական խոշոր արդյունաբերության միջոցով, վորն եժան առլրանքներ ե բաց թողնում, կոռպերացիալի միջոցով գյուղացիական տնտեսությունն արդյունա-

բերության հետ կապենք և այդ անտեսությունն ավելի կուլտուրական, ավելի ձեռնտու դարձնենք թե հողագործությամբ պարապողների և թե աճբողջ անտեսության համար։ Մասնավոր կապիտալի վտարումը և գյուղացիական անտեսության կազմակերպումն այնպիսի պայմաններում են միայն հնարավոր, յերբ ժողովրդական անտեսության բոլոր ուժերը կզարդանան, բոլոր հարստությունները կողտազործվեն։

Տնտեսության ամեն մի բնագավառում,—արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի ասպարեզներում,—մենք պետք են աշխատանքի ծրագիր ունենանք, բոլոր առանձին ծրագրերն ի մի ձուլենք և սրանց հիման վրա անտեսության զարգացման ընդհանուր ծրագիր կառուցենք։ Խորհրդավին անտեսության պայմաններում, յերբ արդյունաբերությունը, տրանսպորտը, յերկրի ընդերքը բանվոր դասակարգին են պատկանում, արտադրողական ուժերի զարգացումն ու սոցիալիզմի կառուցումը միևնույն բանն են, վորովհետև մեկն առանց մյուսի հնարավոր չի։ Յեվ կարեոր են, վոր քարյուղի (նավթի) ամեն մի նոր աղբյուր, յերկաթի հանքի ամեն մի յերակ և այն, — այս բոլորը սոցիալիզմի գործին ծառալեն, տրամփն՝ ընդհանուր պետական արնատեսության հետ կապված լինեն։ Ժողովրդական

անտեսության ասպարիզում ծրագիր կառուցելու անհրաժեշտության մասին լենինն ասել ե.

«Մի վախենաք այն ծրագրերից, վրոնք յերկար տարիների համար են հաշված. առանց այդ ծրագրերի տնտեսական վերածնությունն չի լինի, և թողեք վոր տեղերում աշխատեն դրանց իրագործման վրա։

«Անհրաժեշտ ե, վոր անտեսական պլանները վորոշ ծրագրի հիման վրա իրագործվեն, և վոր այդ ծրագրի իրագործման զարգացումը նկատի առնվի և քաջալերվի. մասսաները վոչ միայն պետք են գիտենան, այլև պետք են զգան, վոր քաղցի, ցրակ ու աղքատության շրջանի կրծատումն ամբողջապես կախված են այն բանից, վոր մեր անտեսական ծրագրերն իրենց կողմից շուտափուցի իրագործվեն։

«Արտադրության առանձին ճյուղերի բոլոր ծրագրերը խիստ համաձայնեցված, կապված պետք են լինեն իրար հետ և միասին պետք են կազմեն տնտեսական այն միամնական ծրագիրը, վորի կարիքն այնքան մեծ և մեղ համար»։

Տնտեսության արտադրողական ուժերի զարգացման ասպարիզում մեզ առաջադրված խնդիրն սկզբում այն եր, վոր վերականգնելինք անտեսությունը գեթ այն սահմաններով, վոր անտեսությունը պատերազմի նախորչակին ունեց

բովինեաև պատերազմի ու հեղափոխության ժամանակ վոչնչացել են հսկայական թվով մեքենաներ ու գործիքներ, քայլացվել են տրանսպորտը և արդյունաբերության ու առների սարքավորումը:

Մեր ծրագրերում մենք հավասարվեցինք նախապատերազմական վերջին տարուն - 1913 թվականին՝ ձգտելով մինչև նախապատերազմյան մակարդակի բարձրացնելու տնտեսությունը, իբրև առաջնակարգ խնդիր: Այս խնդրի իրագործումը բարդանում եր շնորհիվ այն հանգամանքի, վոր ԽՍՀՄ-ն ստիպված եր զարգանալու կապիտալիստական՝ թշնամի յերկրների կողմից ողակված վիճակում, վորոնք ձգտում ելին թուլացնել մեր տնտեսությունը: Բայց ամբողջ խոշոր արդյունաբերության կենտրոնացումը պետության ձեռքում, արտաքին առևտորի մենաշնորհի ամուր կիրառումը, բոլոր միջոցների ճիշտ հաշվառումը, — այս բոլորը մեզ հնարավորություն տվին բավականին կարծ ժամանակամիջոցում նախապատերազմական մակարդակին հասնելու, իսկ առաջիկա տարին հնարավորություն կտա հավասարվելու 1913 թվականին:

Այստեղ սոցիալիստական շինարարության մեր հետագա անելիքների հարցն ե ծառանում:

Վերջին 2-3 տարում մեր տնտեսության զարգացնումն ամեն տարի, նախորդ տարվա նկատ-

մամբ, ավելանալու խոշոր տոկոս եր տալիս, վոր անտեսության կատարյալ վերականգնման հասցըեց մեզ:

Բայց այդ վերականգնումը տեղի յեր ունենում գլխավորապես արդեն գոյություն ունեցող հիմնական կապիտալի հաշվին, այսինքն՝ արդեն գոյություն ունեցող ֆարբիկաներն ու գործարանները վերականգնելու միջոցով:

Քաղաքացիական կոփվերի ընթացքում մեր ձեռնարկությունների մեծ մասը չեր աշխատում: 1921 թվից մենք սկսեցինք այդ ձեռնարկությունները հետզետե բանի զցել, ընդարձակելով արտադրությունը: Այժմ, յերբ մենք 1913 թվի մշակման նորմալին ենք մոտեցել, հարց ե բարձրացել, թե նոր ֆարբիկաներ պետք ե ստեղծել, նոր մեքենաներ պետք ե շինել, պետք ե ընդարձակել ածուխի, հանածոների, քարտուղի արդյունահանությունը: Այս խնդիրը մեծ ուժ ու միջոցներ ե պահանջում:

Հիմա մեր տնտեսության ասպարիզում արգելք չի պատահի արդյոք: Այս հարցի պատասխանը մի ամբողջ շարք պատճառներից ե կախված: միջոցների չափից, վորոնք մենք կկարողանանք ծախսել մեր տնտեսության վրա, աշխատանքի արտադրողականությունից և այն: Բայց, մեր տնտեսության ասպարիզում, դրա

կազմակերպման գործում մենք, հանդեպ կապիտալիստական կազմակերպությունների, մի շարք անպիսի առավելություններ ունենք, վորոնք մեզ պետք է ապահովեն տնտեսության անշեղ զարգացումը նաև հետագալում։ Մեր առաջին առավելությունն այն է, վոր մեզնում տնտեսության բոլոր գլխավոր ճյուղերը մի ձեռքում են գտընդում, բանվորական պետության ձեռքում։

Ծնորհիվ այս բանի մենք կարող ենք ծրագրված տնտեսություն վարել, մենք կարող ենք միջոցների վերաբաշխում կատարել, թուլացնել ձնշումը տնտեսության միքանի ճյուղերում, ուժեղացնելով մյոււները։ Արտադրողական ուժերի զարգացման ասպարիզում ևս, ինչպես կապիտալիստական տնտեսության ասպարիզումն ե, մեղնում չեն լինի բարձրանալու և ընկնելու այնպիսի սուր թոփչըներ, վորոնք քայլալում են տընտեսության վողջ մեքենան ու միանգամայն ջարդում այդ մեքենայի փոքրիկ պատուակները (ՎԻՆՏԻԿԻ)։ Տնտեսության մեր ճգնաժամերը ժողովրդական տնտեսությունն այնքան ել չեն ցընցում. մենք այդ ճգնաժամերը թուլացնում ենք, վորովհետև պետության ձեռքում մենք ունենք գլխավոր ապրանքները, բանկեր և տրանսպորտ։ Յերկրորդ առավելությունն ել այն է, վոր բանվորների վորակը բարձրացնելու և արտադրու-

թյունը մեքենայացման յենթարկելու ուղիով մենք արագ կերպով ենք առաջ շարժվում, — ելեկտրական հզոր կայաններ ենք կառուցում, վորոնք արտադրությունն եժանացնում ու դրա վերադիր ծախսերը պակսեցնում են, — աշխատանքի գիտական կազմակերպում և ստանդարտիզացիա * յենք կիրառում, վոր հեշտացնում և արագացնում ե աշխատանքն ու եժանացնում ապրանքը։ Յեթե մինչև հիմա արտադրողական ուժերի զարգացումն իհաշիվ բանվորական կենդանի ուժի յեղել այսուհետեւ տեխնիկան ու մեքենագիտությունն առավել չափով ոգտագործելու միջոցով ե լինելու։

Այս բոլորը մեզ հիմք են տալիս կարծելու, վոր հետագալում ևս մեր տնտեսության զարգացումն արագ թափով ե ընթանալու, ընդարձակելով ու ամրապնդելով հեղափոխության նվաճումները։

2. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՆԴՈՒՍՏՐԻԱՑՈՒՄԸ ՅԵՎ ՆՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արտադրողական ուժերի զարգացումը մեղնում պետք է ընթանա պետական տնտեսությունը

* Ստանդարտիզացիա—ապրանքների արտադրության և եժանացման պրոցեսն արագացնելու համար՝ արդյունաբերական ապրանքների պատրաստումը սակագաթիկ տիպերի և ձևերի հասցնելու և.

զարգացնելու և գյուղացիականի վրա ազդելու հունով, վերջինիս հետ անտեսական սերտ կապ հաստատելով և գյուղացիական տնտեսությունը նոր տեխնիկական բազավի վրա վերակազմելու միջոցով։ Այս կապի հաստատումը պետք է ընթանա 1) գյուղացիներին բավարար քանակությամբ ու ավելի եժան գնով ապրանքներ մատակարարելու միջոցով. 2) գյուղացիներից կազմակերպված ձեռով հում նյութ հայթայթելու և նրանց՝ թե հացաբույսերի ու թե տեխնիկական բույսերի ցանքսատարածությունը ձեճացնելու միջոցով. 3) թե սպառողական և թե գյուղացիական ու վարկավին կոռպերացիա հիմնելու միջոցով և այն. 4) գյուղացիներին անհրաժեշտ գործիքներով, ինքնառարով ու այլ բաներով սպասարկելու միջոցով։

Պրոլետարական պետության տնտեսական քաղաքականությունը պրոլետարիատի ու գյուղացիության սերտ միության վրա յե կառուցվում. Յեթե քաղաքացիական կոփլերի շրջանում այդ միությունը ռազմաքաղաքական ե յեղել, այժմ տնտեսաքաղաքական պետք ե լինի. Սոցիալգոմին անցնելու շրջանում պրոլետարական պետության պարտքն ե այնպիսի պայմաններ ստեղծել, վորոնք նպաստեն տնտեսության հետամնաց ձեռքի վերակազմությանն ու տեխնի-

կական պրոցեսսին։ Այս պրոցեսսը պետք է ընթանա վոչ թե այնպես, ինչպես կապիտալիստական տնտեսության ասպարիզում ե, այսինքն՝ վոչ թե տնտեսության հետամնաց ձեռքը քայլայելու և շահագործելու միջոցով, այլ պրոլետարական պետության ղեկավարությամբ այդ ձեռքն աստիճանաբար վերակազմելու միջոցով։

Այս ուղղությամբ մեր ձեռքում գլխավոր գործիք պետք է հանդիսանա հզոր արդյունաբերությունը, վորը կոռպերացիայի հետ միասին կհաստատի գյուղացիական տնտեսության տնտեսական զեկավարություն ու կվտարի մասնավոր կապիտալը։ Այստեղից ել մեծանում ե արդյունաբերության նշանակությունը։ Նեղ.ի սկզբի տարիներում մենք ամենից առաջ պետք ե գյուղացիական տնտեսությունը վերականգնեցնել գյուղացուն շահագրգուեցինք ցանքսատարածության հետագա լայնացումով. այժմ գյուղացիական տնտեսությունն ել պետք ե վերակազմել, մեքենաներով սարքավորել ու տնտեսական զեկավարության միջոցով սերտորեն կապել արդյունաբերության հետ։ Գյուղացիական տնտեսության զարգացումը նոր հիմունքներով ապահովել արդյունաբերության արագ զարգացման միջոցով միայն կարելի յե։ Այսպես եր դրված հարցը կուսակցության XIV համագումարում։ Ոպ-

պողիցիալի մի մասը կուսակցության XIV համագումարի առաջ ինդուստրիագման կուրսին գեմ եր արտահայտվում, ասելով «արդյունաբերություն զարգացնելը դժվար բան է, դրա համար խոշոր միջոցներ են պետք, վոր մենք չունենք, իսկ գյուղատնտեսությունը ծախս քիչ է պահանջում. ինչ չափով վոր մեր յերկիրը մինչև այժմ հողագործական է յեղել—պետք է մենք բոլոր միջոցները գյուղատնտեսության մեջ դնենք, իսկ արդյունաբերական այն ապրանքները, վորոնք մեղնում պակաս են, արտահանած հացի ու գյուղատնտեսական մթերքների փոխարեն արտասահմանից ներմուծենք»:

Բայց հետևանքն ինչ կլինի, յեթե մենք հրաժարվենք մեր արդյունաբերությունը զարգացնելոց: Մենք կատարելապես ստորագրված կլինենք կապիտալիստներին, վորոնք առևտրի ասպարիզում մեզ իրենց պայմանները կառաջադրեն, և մենք ստիպված կլինենք համաձայնել այդ պայմաններին: Սոցիալիստական հզոր արդյունաբերություն չունենալը մեզ կզրկի ժողովրդական տնտեսության զարգացումը նազդ զեկավարելու հնարավորությունից ու մեզ կապիտալիստական յերկրներին հարուկ (придаток) կզարձնի: Մինչդեռ մենք ամեն տեսակի հնարավորություններ, ամեն տեսակի ավանդներ ունենք՝ արտադրողական ուժերի զար-

գացման, ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը ծրագրված կերպով զարգացնելու միջոցով թուլացնելու մեր տնտեսական կախումը կապիտալիստականից: Մենք մեր տնտեսությունն այնպես պետք է կառուցենք, վոր մեր յերկիրը կապիտալիստական համաշխարհային սիստեմին հարուկ չգանձա, վորպեսզի կապիտալիստական զարգացման ընդհանուր սիստեմի մեջ չմտնի, իբրև դրան ոժանդակ մի ձեռնարկություն,— վորպեսզի մեր տնտեսությունը զարգանա վոչ իբրև համաշխարհային կապիտալիզմի առանձին ձեռնարկություն, այլ իբրև տնտեսական ինքնուրուն միավոր, վորը, գլխավորապես, ներքին շշուկայի վրա յե հենվում, մեր յերկրի ինդուստրիալի ու գյուղացիական տնտեսության շաղկապի վրա յե հենվում:

«Յերկու գլխավոր գիծ գոյություն ունի. գծերից մեկը յելակետ ունի այն, վոր մեր յերկիրը գեռ յերկար ժամանակ պետք է հողատիրական ագրարային յերկիր մնա, գյուղատնտեսական մթերքներ արտահանի ու սարքավորում ներմուծի. վոր այս ուղղությամբ պետք է կառուցել, այս ուղղությամբ պետք է զարգանալ նաև հետագայում: Հստ գործի ելության այս գիծը մեր ինդուստրիալի խտացումն է պահանջում: Այս գիծն իր արտահայտությունն ընկ. Շանինի

թեզիսներում ե ստացել (գուցե մեկն ու մեկն «Экономическая жизнь»-ի մեջ կարդացած լինի այդ թեզիսները), Այս գիծը անում ե դեպի այն, վոր մեր յերկիրը յերբեք, կամ թե գրեթե յերբեք, չկարողանա պատշաճ կերպով ինդուստրիացման յենթարկվել. մեր յերկիրը անտեսապես ինքնուրույն միավորից, վորը ներքին շուկաի վրա յէ հենվում, ստիլված պետք ե լիներ ոբյեկտիվ կերպով հարուկ դառնալ կապիտալիստական ընդհանուր սխստեմին։ Այս գիծը նշանակում ե՝ շեղվել մեր շինարարության խնդիրներից։ Այս գիծը մեր գիծը չի։

Կա մի ուրիշ գլխավոր գիծ, վորը յելակետ ունի այն, վոր մենք մեր բոլոր ուժերը պետք ե լարենք, քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական ողակումը, մեր յերկիրն այնպիսի մի յերկիր դարձնելու, վորն ոջախ ծառալի՛ դեպի իրեն քաշելու մնացած բոլոր յերկըները, վորոնք կապիտալիզմից կամաց-կամաց պոկլում, սոցիալիստական անտեսության հոգնի մեջ են ընկնում։ Այս գինը մեր արդյունաբերության առավելագույն ծավալումն ե պահանջում, սակայն այն չափով ու համապատասխան այն միջոցների, վոր մենք ունենք։ Այս գիծը վճռական կերպով ժըստում ե կապիտալիզմի համաշխարհագին սխստեմին մեր յերկիրը հարուկ դարձնելու քաղաքա-

կանությունը։ Այս գիծը մեր շինարարության գիծն ե, վորին կառչում ե կուսակցությունը և վորին պետք ե կառչի հետագայում։ Այս գիծը պարտադիր ե, քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական ողակումը»—այսպես եր ասում Ստալինը կուսակցության XIV համագումարում, և համագումարը վորոշեց՝ մեր յերկրի ինդուստրիացման ուղիով ընթանալ։

Այժմ խնդիրը վոչ թե Փաբրիկաներ վերականգնելը, այլ նորերն ստեղծելն ե, հետամաց ձեռնարկությունները կատարելագործելն ու դրանց վերասարքավորելն ե։ Վերջին յերկու-յերեք տարվա ընթացքում արդյունաբերությունն արագ քայլերով եր վերականգնում։ Սակայն նույնիսկ ներկայումս $95^{\circ}/_{\circ}$ -ով վերականգնած արդյունաբերությունը հնարավորություն չունի բավարարելու ապրանքների ամբողջ պահանջը, վորովհետեւ գլուղացիությունն այժմ ափելի յեապրանք սպառում և կարող ե սպառել, քան կարող եր ցարական Ռուսաստանում սպառել։ Գյուղացիությունը հարկ քիչ ե տալիս, հող շատ ունի, իր աշխատանքի արտադրողականությունը բարձրացնում ե։ Այս բոլորն ապրանքների պահանջն են մեծացնում և պահանջում են մեզնից ընդարձակել արդյունաբերությունը։ Պետք ենոր անկվածալին ֆաբրիկաներ ու կաշեգործարաններ

շինել, պետք է գյուղացիներին գյուղատնտեսական գործիքներ, տրակտորներ տալ: Իսկ նոր ֆաբրիկաներ ու գործարաններ ստեղծելը պահանջում է բարձրացնել յերկաթի արդյունաբերությունը, ուժեղացնել վառելանյութերի շահագործությունը, սարքավորել մեքենաներ և գործիքներ պատրաստող գործարանները, պահանջում է ելեկտրիֆիկացիա անցկացնել: Նոր ֆաբրիկաներ ու գործարաններ շինելու համար միջոցներ են անհրաժեշտ, այն ել շատ խոշոր միջոցներ: Խնդուստրիացման հարզը սերտ կապված է այդ միջոցների կուտակման հարցի հետ: Կապիտալիստներն՝ աշխատավորներին դաժան կերպով շահագործելու, նոր մարզեր զրավելու միջոցով են արտադրությունը ընդարձակում, նոր ձեռնարկություններ շինում, իսկ մեր անտեսության ասպարիզում՝ վոչ-արտադրական ծախսերը կը քածածելու, ժողովրդական անտեսության ճյուղերը պլանավիճն կերպով իրար կապելու միջոցով, պիտաքափակի սոցիալիստական կուտակում և անհրաժեշտ Մեր ուժն այն ե, վոր մեզնում անտեսության զարգացումը վոչթե տարերային ե, այլ այն ե, վոր Պետականի ու Ա.ՊԽ-ի (Աշխատանքի Պաշտպանության Խորհուրդ) միջոցով իրար ենք կապում ամբողջ անտեսությունն ու վորոշ ծրագրի հիման վրա դեկալավում այդ անտեսության առանձին ճյուղե-

րը: Այս բանը մեր անտեսության ճիշտ զարգացումն է ապահովում, այս բանը պետք է ապահովի և սոցիալիստական կուտակման արագությունը:

ԽՍՀՄ-ի հիմնական արդյունաբերությունը պետությանն է պատկանում ու ամբողջ ժողովրդական անտեսության կարևորագույն մասն է հանդիսանում: Կապիտալիստական անտեսության ասպարիզում պրոլետարիատը հանդես է գալիս իբրև շահագործվող, հավելյալ արժեք ստեղծող դասակարգ, վոր ստանում են առանձին կապիտալիստները կամ բուրժուական պետությունն ամբողջությամբ, վորը միշտ կապիտալիստների ոգտին է գործում: Բոլորովին այլ պատկեր է ստացվում մեզնում. արտադրության բոլոր գործիքները, ֆաբրիկաներն ու գործարանները բանվոր դասակարգին են պատկանում, և այս դասակարգն ինքն իրեն շահագործել չի կարող, վորովհետև շահագործման համար հարկավոր են յերկու դասակարգ՝ այն, վոր շահագործում ե, և այն, վորին շահագործում են:

Ուրիշ դասակարգի կողմից յուրացվող հավելյալ արժեք մեզնում գոյություն չունի, այլ կա հավելյալ արդյունք, վորը գնում է պրոլետական պետության արամադրության տակ և պետությունն ոգտագործում է այդ՝ ամբողջ

բանվոր դասակարգի կարիքների համար՝ հոգուած հետագա տնտեսական զարգացման։ Բանվոր դասակարգը վոչ թե շահագործման միջոցով ե կուտակում, այլ՝ ինքնասահմանափակ միջոցով՝ հոգուած իր տնտեսության զարգացման, վորովհետև արդյունաբերության զարգացումը մոտեցնում ե սոցիալիզմի հաղթանակը։

Սոցիալիզմը հասարակության այնպիսի մի կազմակերպություն ե, ուր չկան դասակարգեր, ուր բոլոր մարդիկ ամբողջ հասարակության կարիքների համար աշխատող, ամեն տեսակի անհրաժեշտ բարիք ստեղծողներ են։ Սոցիալիզմը կառուցվում ե վոչ թե աղքատության, այլ հարստության վրա, բարձր տեխնիկայի վրա, վորը կազմակերպված հասարակությանը հնարավորություն կտա կառավարելու բնությունը և ամենաքիչ ուժեր ծախսելով իր գոյության և զարգացման բոլոր անհրաժեշտ միջոցներն ստեղծելու։ Սոցիալիստական տնտեսության զարգացումը պայմանավորվում է տեխնիկայի զարգացումով, աշխատանքի հեշտացումով, ամբողջ արտադրության կատարելագործումով։ Իսկ այս բանը հնարավոր ե այն ժամանակ, յերբ պրոլետարիատը կղեկավարի վողջ ժողովրդական տնտեսության զարգացումը և, ամենից առաջ, արդյունաբերությունը։ Այն ժամանակ ամբողջ արտադրություն-

նը կդնա տնտեսության հետագա զարգացման գործի ոգտին, կնպաստի հետամնաց ձեւերի վոչնչացմանը, հնարավորություն կտա ավելի նպատակահարմար ձեռվ բաշխելու ժողովրդական տնտեսության յեկամուտը, վորն այժմ վոչ թե առանձին կապիտալիստի ոգտին, այլ սոցիալիստական շինարարության ընդհանուր ֆոնդին ե զնում։ Առանձին կապիտալիստն իր միջոցները տնտեսության այն ճյուղերի մեջ ե զնում, վորոնք անձնապես իրեն են ավելի մեծ ոգուած տալիս։ Սոցիալիզմ կառուցելու ժամանակ պրոլետարական պետությունն իր միջոցները տնտեսության մեջ ե զնում՝ համաձայնեցնելով ամբողջ տնտեսության ընդհանուր շահերին, իրեն վորոշ նպատակ առաջարրած ունենալով։

Արդյունաբերությունը զարգացնելու միջոցով մեր պետությունը գյուղագիտական տնտեսության հետ ավելի յե սերտ կապվում՝ գործիքներ մատակարելու միջոցով ոժանդակում ե այդ տնտեսությունը մեքենայացման յենթարկելուն, սահմանական անցնել և այն։ Մենք այժմ գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը, վորը $50^{\circ}/_0$ գերազանցում ե նախապատերազմականին, և արակտորի նոր գործարաններ ենք շինում, ընդարձակելով գործիքնե-

րի արտադրությունը հին գործարաններում։ Այժմ արդեն մի ամբողջ շարք շրջաններում գյուղացիական տնտեսությունը մերենալացման ե յենթարկվում, առանձին տնտեսություններն արտեխների ու կոլեկտիվների յեն միանում, այսինքն թե տնտեսապես և թե քաղաքականապես դառնում են սոցիալիստական կղզիներ անհատական, տեխնիկապես հետամնաց գյուղացիական տնտեսությունների ծովում։

Սոցիալիստական շինարարության ոգտին զարգացող պետական արդյունաբերության առկայության դեպքում միայն մենք կարողանանք վերաշննել գյուղը, իր տնտեսական և տեխնիկական հետամնացությունը, ստիպել գյուղին մեր ուղիով ընթանալու։ Առանց պետական հզոր արդյունաբերության մենք հնարավորություն չունենք զեկավարելու գյուղատնտեսությունը, իսկ առանց այս զեկավարության առաջ կդա գյուղի շերտավորում, կուլակության ազդեցության ուժեղացում, մամնավոր կապիտալի զարգացում։

Փողովրդական տնտեսության վոր բնագավառին ել մոտենալու լինենք, մեզ համար պարզ ե, վոր առանց մեր պետական արդյունաբերությունը զարգացնելու, առանց ոգտագործելու այդ արդյունաբերությունը հոգուտ սոցիալիզմի, մեր տնտեսության հետագա զարգացումը սոցիալիստական շինարարության ուղիով անհնարին ե։

Սրանից չի կարելի յեղբակացնել այն, վոր մենք այժմ սոցիալիզմի ժամանակ ենք ապրում։ Կուսակցության XIV համագումարում ոպպոզիցիան, Ժխտելով մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը, միաժամանակ կուսակցության մեծամասնությանը մեղադրում եր այն բանում, վոր մեծամասնությունն ինքնիրեն խաբում ե, կարծերով, թե մենք արդեն սոցիալիստական կարգերում ենք ապրում։ Այս բանը ճիշտ չի։ Մենք ապրում ենք անցողիկ շրջան, ուր կան և կապիտալիստական և սոցիալիստական տարրեր։ Իսկ կապիտալիզմի մնացորդները հաղթահարելու համար հարկավոր ե ուժեղացնել, զարգացնել անտեսության այն ճյուղերը, վորոնք սոցիալիստական շինարարության հիմքն են հանդիսանում և վորոնք տնտեսության հետամնաց ճյուղերը սոցիալիզմի ուղիով են առաջ մղում։ Ժողովրդական տնտեսության ամենազլխավոր մասը, վոր նպաստում ե այդ բանին, պետական սոցիալիստական արդյունաբերությունն ե։

Ինդուստրիացման անհրաժեշտ պայմանը վոչ միայն նոր ձեռնարկություններ շինելն ե, այլև ամբողջ տնտեսության ընդհանուր վերակազմությունն ե։ Այսպիսի վերակազմության հիմքն ելեկարիֆիկացիան ե։ Առաջին անգամ այս առթիվ լենինը հարցը գրեց 1920 թ., և հենց այն

ժամանակ ել ընդունվեց ելեկտրիֆիկացիալի ծրագիրը, վորը հաշված է 10—15 տարվա համար։ Այս ծրագրի համաձայն շրջանալին մեծ կայանների ցանց պետք է կառուցվի, վորոնք ամբողջ շրջանների եներգիա մատակարարեն։ Այս կայանների մի մասին տեղական վառելանցութ (ածուխ, տորֆ) պետք է հալիթալիթվի, մի մասն ել ջրով սկսած և բանի։ Այս բանը հնարավորություն կտա ելեկտրական եժան եներգիա պատրաստելու և այդպիսով արտադրությունն եժանացնելու, տրանսպորտն աղատելու վառելանցութ կրելուց, — այս բանը մեքենայացման կենթարկի աշխատանքը ֆաբրիկաններում ու գործարաններում։ Հզոր ելեկտրակայաններ կառուցելը կնպաստի տնտեսության ամրապնդման, աչքի ընկնող չափով միջոցներ ու բանվորական կենդանի ուժ կազատի, նոր շրջաններ ողտագործելու հնարավորություն կտա, վոր առաջ ողտագործել չեր կարելի՝ վառելանցութ չունենալու և սարքավորման թանգության պատճառով։

Այժմ մեզնում շրջանալին Շ կայան է շինվում (ծրագրված 30-ից). սրանց մի մասը համարյա վերջացած է և 160 հազար կիլովատ է տալիս։ Դրանցից միքանիսը հսկայական արժեք են ներկայացնում, մասնավանդ Վոլխովաշենը, վորն ողտագործում է Վոլխով գետի ջրի հոսանքի ու-

ժը, և Շատուրի կայանը, վորը տեղական տորֆով ե բանում։ Այժմ շրջանալին ելեկտրակայանների շինարարությունն ընդարձակվում է, և ծրագիրը վորոշված ժամանակին կիրագործվի։ Սրան զուգընթաց կատարվում է տեղական կայանների կառուցում, վորոնց թիվը 9 տարվա ընթացքում Շ անգամ մեծացել է։

3. ՇՈՒԿԱՆ ԽՈՐՃՐԴՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԱՄՊԱՐԻՉՈՒՄ ՅԵՎ ՊԱՅՔԱՐ ԸՆԴԳԵՄ ՄԱՍՆԱՎՈՐ ԿԱՊԻՏԱՆԻ ԿՈՌԵՐԱՑԻԱՆ ՅԵՎ ԻՐ ԴԵՐԸ

Մեր քաղաքականության խնդիրն այն է, վոր այնպիսի հանգամանքներ ստեղծենք, վորոնց ժամանակ տնտեսության զարգացումը, հիրավի, սոցիալիստական ուղիով ընթանար։ Դրա համար անհրաժեշտ է արդյունաբերության զարգացումը սերտորեն կապել անբողջ տնտեսության հետ և, ամենից առաջ, գյուղացիականի հետ։ Մոտ 20 միլիոն մանը, տեխնիկակի հետամնաց գյուղացիական տնտեսություններ ունենք մենք։ Հեղափոխությունից առաջ այդ տնտեսությունների հիմնական մասսան իր խղճուկ գոյությունը քարշեր տալիս, կախումն ունենալով արդյունաբերողներից, կարգածատերերից ու հարուստ կուլակներից։ Բարձր հարկերը, արդյունաբերական թանգ

ապրանքները, թանգ վարկերը—այս բոլորը գյուղացուն ճորտացնում, ստրուկի դրության մեջ ելին դնում, փորը, թեպետ, կարծեք թե սեփականատեր եր, բայց իրականում նա իր ամբողջ յեկամուտը ցարի գանձարանին, կալվածատերերին ու կապիտալիստներին եր տալիս:

Այսպիսի պայմաններում գյուղացիական տնտեսության զարգացման մասին խոսք անդամ լինել չեր կարող:

Մեր քաղաքականության նպատակն այն է, վոր գյուղացիական տնտեսության արտադրողականությունը զարգացնենք, այդ անտեսությունը կուշակից ու վաշխառուից ազատագրենք, տնտեսության սարքավորման գործում ոժանդակենք ինվենտարով, ելեկտրիֆիկացիայով և այլն:

Պետական արդյունաբերության և գյուղացիական տնտեսության միջև այնպիսի փոխարարերություն պիտի հաստատվի, վորը կարողանա ժողովրդական տնտեսության յերկու մասի զարգացում ապահովել. արդյունաբերության զարսացումը կավելացնի և կեժանացնի գյուղացիության մատակարարումն արդյունաբերական ապրանքներով, գյուղին մեքենաներ կտա և ելեկտրիֆիկացիայի կենթարկի գյուղը. ծավալվող արդյունաբերությունը կկլանի գյուղացի բնակչության այն ավելորդը, վորը պետք է ստաց-

վի գյուղատնտեսության մեքենանացման հետեւանքով. մյուս կողմից, գյուղացիական տնտեսության զարգացումը կավելացնի արդյունաբերության համար հում նյութի ստացումը, կեժանացնի մննդամթերքների արժեքը, արդյունաբերության ապրանքների համար շուկա կընդարձակի, այսինքն արդյունաբերության հետագա զարգացման համար հող կպատրաստի ու այդպիսով կմեծացնի սոցիալիստական կուտակման հնարավորությունը:

Այսպես է տնտեսության զարգացման ճանապարհը: Սակայն դրա իրագործումը մի ամբողջ շարք պատճառներից ե կախված և, ամենից առաջ, զարգացող արդյունաբերության ու գյուղացիական տնտեսության միջև ճիշտ և սերտ կապ հաստատելուց: Գյուղատնտեսական մթերքների ու մեր արդյունաբերական ապրանքների փոխանակությունը շուկայի միջոցով, առևտարական ճանապարհով ե կատարվում: Պետք է այնպիսի հանգամանքներ ստեղծենք, վորոնց ժամանակ քաղաքի և գյուղի միջև չկարողանա միջամուլս լինել այնպիսի միջնորդ, վորը կխանգարի պետական և գյուղացիական տնտեսությունների ճիշտ զարգացումը: Այդ միջնորդը, —մասնավոր կապիտալը, —ամենից առաջ կձգտի առևտուրներ ձեռքը վերցնելու, հույս ունենալով առևտորի

միջոցով գյուղը, նվաճելու՝ պետարզունաբերական ապրանքներ այնտեղ հասցնելով ու հում նյութի շուկաներ գրավելով։ ՆԵՊ-ի սկզբի տարիներում նամնավոր այդ կապիտալը վոչ միայն գյուղացիական առևտուրը, այլև քաղաքի մանրածախն ու մեծածախը խլեց, հաճախ հանդես գալով իբրև միջնորդ պետական կազմակերպությունների միջև։ Շնորհիվ իր ձկունության ու ճարպիկության, հենվելով վաղորոք ձեռք բերած փորձառության վրա, մասնավոր կապիտալը կարողացավ դիմավոր միջնորդ դառնալ պետական և գյուղացիական տնտեսության միջև։ Մասնավոր կապիտալի գիրքը նվաստացնելու համար անհրաժեշտ է լարված պայքար մղել։ Ի՞նչ հետեւնք ե ունենալու մասնավոր կապիտալի ուժեղացումը և ի՞նչպես պետք ե մենք կովենք դրա դեմ։

Մասնավոր կապիտալի գերիշխանությունը շուկայում բոլորովին կործանի մեր քաղաքականության հիմքը, վորովհետև պրոլետարիատի ու գյուղացիության միջև միջնապատ կտտեղծի, անմիջական կապը կմորտակի, գյուղատնտեսության զարգացումն անհրաժեշտ հունի մեջ զնելու հնարավորությունից կրտի. մյուս կողմից, նման պարմաններում մասնավոր կապիտալը շուկաի դեկագրը կհանդիսանա, ինքը գներ կսահմանի, արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը

կատարելապես ստորագաս կդարձնի իրեն։ Խոշոր միջոցներ կուտակելով, մասնավոր կապիտալն արագ կերպով կարող ե հզոր ուժ գառնալ, վորը, իբրև կազմակերպված մի ամբողջություն, դեմ կլանդնի պետական տնտեսության, ուժասպառ անելով վերջինի կազմակերպող աղքեցությունը գյուղացիական տնտեսության վրա։ Ուստի մասնավոր կապիտալի զարգացման և ուժեղացման դեմ մղվող պայքարը մեր տնտեսական քաղաքականության հիմնական մասը պետք ե հանդիպանա։ Բայց այս պայքարը պետք ե մղեն վոչ թե վարչական կարգով ճնշելու մեթոդով, այլ տնտեսական մրցումով, տնտեսության սոցիալիստական ձևերով աստիճանաբար այն վտարելու միջոցով։

Ներկա հանգամանքներում մենք չենք կարող բոլորովին հրաժարվել մասնավոր կապիտալից, — ամբողջ շուկան պետական և սպառողական խանութների ցանցով պատելու բավականաչափ միջոցներ ու փորձառություններ մենք չունենք, — մենք բավականաչափ միջոցներ չունենք ոգտագործելու բոլոր այն հարստությունները, վորոնք յերկրի ընդերքումն են գտնվում, և այն։ Մասնավոր կապիտալն անցողիկ շրջանում պետք ե մեջ քաշվի իբրև ոժանդակ կապիտալ, բայց մենք պետք ե այդ կապիտալն այնպիսի պարմանների

մեջ գնենք, վոր պետության հսկողության տակ աշխատի և մեզ համար ոգտակար զործ կատարի: Մյուս կողմից, մենք մասնավոր կապիտալը (գըլխավորապես արտասահմանյան կապիտալը) մեզ հետ այսպիսի աշխատակցության մեջ պիտի դնենք, վորի ժամանակ պետական ղեկավարությունն ու վերահսկողությունն ապահովված լինի: Այս թվին են պատկանում կոնցեսսիաները, խառը և փայտիրական ընկերությունները: Մենք այս-տեղ մասնավոր կապիտալը պետական կապիտալիցմի հիմունքներով կկազմակերպենք այն ժամանակ, յերբ պրոլետարական պետությունն իր միջոցները մասնավոր կապիտալի հետ ունեցած ընդհանուր ձեռնարկությունների մեջ համախմբի և այդ ձեռնարկությունների գործունելությունը ղեկավարի, կամ այնպիսի պայմաններ (կոնցեսսիաներ) կնքի, վորոնք ապահովեն մեր հսկողությունը կապիտալիստի վրա: Այսպիսի պայմաններում կապիտալիստն իր շահը կունենա, վաս-տակ կստանա, բայց վոչ մի ղեկավար դեր խա-ղալ և անտեսության սոցիալիստական հիմունքներն ամրապնդելուն վնասակար հանդիսանալ չի կարող:

Մեր բնական հարստությունները շահա-գործելու համար կոնցեսսիաներ կնքելիս կոնցե-սսիատերերի գործունելության վրա մենք հսկո-

ղություն, աշխատանքների կարգ, աշխատանքի պայմաններ ենք սահմանում, վաստակից վորոշ տոկոսներ ենք ստանում, կոնցեսսիաների ժամ-կետները լրանալուց սարքավորված ձեռնարկություն ենք ստանում, վորը մեր սոցիալիստական արդյունաբերության և խառնվում, այն ուժե-ղացնում և մեր տնտեսության վերակշռությունն ընդդեմ մասնավորի ել ավելի լե մեծացնում:

Այլ կերպ ենք մենք պայքար կազմակերպում ընդդեմ մասնավոր կապիտալի, վորը մեր տնտե-սության ասպարիզում զլխավորապես առևտրի գործում, ինչնուրույն կերպով և հանդես գալիս: Այդ կապիտալը բաժան-բաժան լեզած մի մասսա յե-այն տնտեսությունների, վորոնք իրար հետ կապ-ված չեն և իրար դեմ են մրցում: Արդյունաբերու-թյան ասպարիզում մասնավոր կապիտալն ըստ իր չափերի մեծ չի և պետական տնտեսության հետ մրցել չի կարող: Մասնավոր կապիտալն ավելի վասնվագոր և ներքին առևտրի ասպարիզում, ուր մրցման համար ընդարձակ տեղ և արվում, ուր մենք առևտրական կարգավորված ցանց չունենք, ուր շնորհիվ մի շարք ապրանքների պակասության, սպեկուլացիայի համար լայն հրապարակ և բացվում: Այս ընազավառում մաս-նավոր կապիտալի դեմ մղվող պայքարը կոոպե-րացիայի զարգացման և ամրապնդման ուղիով

ե ընթանում այն կոռպերացիալի ուղիով վորը
պետք ե վտարի մասնավոր կապիտալը Բայց
այդ պայքարի հաջողությունը մի շաբք պատճառ-
ներից ե կախված. թե մեծածախ և թե ման-
րածախի ապրանքների գներն իջեցնելուց, մեր
արդյունաբերության արդյունքն ավելացնելուց,
վողջ կոռպերատիվ ցանցը կարգավորելուց, կոռ-
պերացիան առողջացնելուց:

Լենինն առևտրի կազմակերպմանը մեծ նշա-
նակություն եր տալիս: Յերբ նա «առևտուր սո-
վորել» լողունզը բաց թողեց, դրանով ուզում եր
ասել, վոր առանց առևտրի կազմակերպման՝ մաս-
նավոր կապիտալը մեզ կհարվածի, շուկան կզրա-
վի, քաղաքի ու գյուղի, շաղկապը կխորտակի,
տնտեսության սոցիալիստական տարրերի դար-
գացումը կխանգարի:

Կարևոր դերն այստեղ բացառապես կոռպե-
րացիալին ե արվում, վորը պետական և գյու-
ղացիական տնտեսությունները յերկու գլխավոր
գծով պետք ե իրար հետ կապի, — գյուղացիու-
թյան արդյունաբերական ապրանքներ մատակա-
րարելով և արդյունաբերության ու քաղաքի
գործածության համար գյուղատնտեսական
մթերքներ հայթալթելով:

Նեղ-ի սկզբնական շրջանում, իբրև սոցիա-
լիզմի համար կովելու գործիք, կոռպերացիան

շատերը թերագնահատում ելին. Լենինն ինքն ել
նշում ե այդ յերկութի պատճառը. առանձին
աշխատակիցներ հաշվի չելին առնում այն պայ-
մանները, վորոնցում մեր կոռպերացիան ե զար-
գանում, քննության չելին առնում մեր տնտե-
սության ելությունը: Վոմանք կարծում ելին,
վոր մեր պայմաններում ևս կոռպերացիան չի
կարող ծառայել սոցիալիստական շինարարության
գործին, մյուսներն ուղղակի թերագնահատում
ելին կոռպերացիան, հաշվի չելին առնում տնտե-
սության առանձին ճյուղերի հարաբերություննե-
րը: Մյուս կողմից, Նեղ-ի սկզբի տարիներում
մենք անփորձ ելինք, չելինք կարողանում տըն-
տեսության ապահովան անսխալ կառուցել: Կոռ-
պերացիալի նշանակությունը կատարելապես յե-
րևան յեկավ միայն 1924 թ. մոտերքը: Ու, կ. կ.
XIII համագումարը կոռպերացիալի մասին հա-
տուկ զեկուցում լսեց և իր բանաձեռում վորոշեց՝
«մեր տնտեսության առաջնակարգ կարևորա-
գույն խնդիրը՝ շուկան գրավելն ու կազմակեր-
պելն ե, այսինքն՝ հիմնականում—խնդիրը կոռպե-
րացիան զարգացնելն ու ամրապնդելն ե: Կոռ-
պերատիվ շինարարության խնդիրի ամբողջ կա-
րևորությունը համարակալի պետք ե լինի նաև նրա
համար, վոր եկոնոմիկալի բնագավառում միան-
գաման պարզ ե, վոր մեր հետագա ընթացքը

գեղի սոցիալիստական տնտեսությունը վորոշվելու յեւ յերկու զուգահեռ մոմենտով. առաջին—պետական խոշոր արդյունաբերության զարգացման հաջողություններով և յերկրորդ՝ բնակչության կոռակերացման հաջողություններով. Ինչ չափով վոր արդյունաբերության առողջացումն արդեն իր դրական հետևանքներն եւ տվել այն չափով մոռակա շրջանում ուշադրությունն առետրի ու կոռակերացիայի զարգացման վրա պետք եւ որդի»:

Կոռակերացիայի միջոցով մենք հետզհետե արդյունաբերությունն ու սպառումն ավելի ու ավելի սերտորեն ենք կապում իրար հետ, ոգտագործելով առետուրը, իբրև սոցիալիստական պլանային բաշխման ուղիւ:

Սոցիալիստական տնտեսության զարգացումն ապահովելու համար շուկա կազմակերպելու հարցը բացառիկ նշանակություն ունի: Սոցիալիստական արդյունաբերության հետ միասին, կոռակերացիան նպաստում եւ մասնավոր կապիտալի վտարմանը և թուլացնում այդ կապիտալի դերը ժողովրդական տնտեսության առարիգում:

4. ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՐԱՄԱՅՈՂ ԲԱՐՁՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԿՅԱՆՔԻ ՊԼԱՆԱՅԻՆ ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Կոռակերացիան, արդյունաբերության հետ միասին, մեկն եւ այն «ճրամաց դ բարձունքներից», վորոնք պետք յեղած ուղղությամբ ապահովում են մեր տնտեսության զարգացումը: Այդ «բարձունքներին» պետք եւ ավելացնենք նաև ֆինանսների դեկավարությունը, արտաքին առետրի մենաշնորհը և միջոցներ ու հաղորդակցության ճանապարհներ ունենալը:

Ժողովրդական տնտեսության այդ ճյուղերը վրձափի են ոժանդակում մեր տնտեսության զարգացմանն ու ամրապնդմանը: Մենք գիտենք, վոր կապիտալիստական տնտեսության ասպարիգում բանկերը բացառիկ մեծ գեր են խաղում. վերջինների ձեռքում են կենտրոնանում խոշոր միջոցները, վորոնց շնորհիվ բանկերը դեկավարում են արդյունաբերությունն ու ամբողջ տընտեսությունը՝ ձեռնարկություններից մեկին պաշտպանելով, մյուսին՝ վարկից զրկելով: Հեղափոխության հենց սկզբում ընկ. լենինը կապիտալիզմի դեմ կավելու հիմնական պահանջներից մեկը դրեց բանկերն ազգայնացնելու հարցը: Այժմ մենք ենք վարկն ու ֆինանսական ամբողջ

սիստեմն ոգտագործում, իբրև տնտեսության արտադրական ուժերի ոժանդակ միջոց:

Մեր պետության ֆինանսական քաղաքականության ասպարհում յերեք խնդիր կա դըրված. 1) պետք ե կառուցենք վարկային հիմնարկների այնպիսի մի ցանց, վորն ապահովի արտադրողական ուժերի զարգացումն ու պետական և կոռպերատիվ տնտեսության ամրապնդումը. 2) կառուցենք հարկալին այնպիսի մի ապարատ և սիստեմ, վորը, ինաշիվ մասնավոր տընտեսության, պրոլետարական պետության համար միջոցների կուտակում ապահովի և 3) մասնավոր կապիտալի գեմ պայքարելու նպատակով բաժան-բաժան յեղած մանր կապիտալը պետության ձեռքում կենարոնացնենք:

Ներկա պայմաններում, առանց դրամի, տնտեսության ծավալումն անհնարին ե, — այստեղից ել առաջ ե գալիս վարկի նշանակությունը մեր տնտեսության ասպարիզում, բանկերի ցանց կառուցելու նշանակությունը: Բանկերի միջոցով տնտեսությունն արագ կերպով կարող ե զարգանալ, վարկեր տալու միջոցով մենք կարող ենք ամրապնդել տնտեսության այն ճյուղերը, վորոնք մեզ առանձնապես կարևոր են. բանկերի միջոցով կարելի յէ պետական և կոռպերատիվ տընտեսությունը մասնավոր կապիտալի համեմատու-

թյամբ ավելի լավ պայմանների մեջ գնել, այդպիսով ամրապնդելով սոցիալիստական շինարարության տարրերը:

Տնտեսությունը վարկավորելու համար մեղնում կազմակերպված ե բանկերի ցանց—պետական, վոր կենտրոնական գլխավոր բանկն ե, և տնտեսության հիմնական ճյուղերն սպասարկող մի շարք հատուկ—Արդյունաբերական, Արտաքին առևտության, Գյուղատնտեսական, Կոռպերատիվ և Ելեկտրոբանկ:

Աչքի ընկնող տեղը պետք ե գրավեն այն կոռպերատիվ բանկերը, վորոնք պետության մասնակցությամբ, կոռպերացիալի միջոցներով են կազմակերպված ու կոռպերատիվ հիմնարկություններ են սպասարկում—գյուղատնտեսական, սպառողական և այլ հիմնարկներ: Մանր վարկի կոռպերացիան գյուղատնտեսությունը վերականգնելու ասպարիզում մեծ գեր ե խաղում, գյուղացիներին ոգնում ե խուսափելու կուլակի ճորտացումից, այն կուլակի, վորը վողը բարձր տոկուներով ե տալիս: Կոռպերատիվ բանկերին զուգընթաց պետք ե զարգանան փոքր շրջաններ սպասարկող՝ տեղական խորհուրդների ու կոմմունալ տընտեսության քաղաքային (մունիցիպալ) բանկերը, վորոնք տեղական տնտեսությունը մի ամբողջության մեջ են միացնում ու պաշտպանում այն,

Բանկերը հնարավորությունն են տալիս խո-
շոր կապիտալն արտազդության զարգացման ոգ-
տին համախմբելու։ Բայց մանր կապիտալների
համախմբումը ևս մեզնում պետք է կիրառվի
մանր ավանդների համար խնայողական գան-
ձարկղներ հիմնելու միջոցով։ Մինչդեռ բուրժու-
ազիան գանձարկղների ավանդները հոգուտ իրեն
և ոգտազործել, մեզնում աշխատանքի այդ
ավանդները կզործադրվին տնտեսության զար-
գացման համար՝ հոգուտ աշխատավորների։ Աշ-
խատանքին խնայողական գանձարկղների մի-
ջոցով, մեր տնտեսությունը պաշտպանելու հա-
մար, պետությունը բանվորներից ու գյուղացի-
ներից վարկ և ստանում, իսկ աշխատավորներն,
իրենց դրամները գանձարկղ դնելով, ավանդների
համար տոկոսներ են ստանում։

Մեր Փինանսական քաղաքականության աս-
պարիզում յերկրորդ խնդիրը հարկավին ճիշտ քա-
ղաքականությունն ե։ Անցողիկ շրջանում այդ
քաղաքականությունը խոչը նշանակություն ու-
նի, վորովհետեւ հնարավորություն և տալիս մաս-
նավոր կապիտալից վերցնելու յեկամտի մի մասը
և այն ոգտագործելու պետական տնտեսությունն
ամրապնդելու գործի համար։ Հարկերի միջոցով
մենք մասնավոր կապիտալի նկատմամբ յերկու
խնդիր կարող ենք կիրարկել։ 1) յեկամտի մի

մասը պետության տրամադրության տակ վերցնել.
2) հնարավորություն չտալ այդ կապիտալին ամ-
րապնդվելու և դեմ կանգնելու պետական և կոռ-
պերատիվ տնտեսությանը, բարձրացնելով հար-
կերն այնտեղ, ուր այդ հարկավոր ե՝ հոգուտ
խորհրդավին շինարարության։

Փոքր ինչ այլ բնույթ ունի գյուղացիներից
հարկ առնելը. մի կողմից, գյուղացիներն իրենց
յեկամտի մի մասը պետությանը պետք է պահա-
պետական ընդհանուր կարիքների համար, թե
հոգուտ կարգ և ապահովությունն պահպանելու և
թե հոգուտ ժողովրդական ամբողջ տնտեսության։

Մյուս կողմից, գյուղիների զանձումով ստաց-
ված միջոցները հետո ուրիշ ձեռվ վերադարձ-
վում են գյուղացիներին. առանձին գյուղացին
հաճախ հնարավորություն չի ունենում իր յեկա-
մուտն իր արտադրությունը բարեկավելու համար
ոգտագործելու, իսկ յեթե այդ յեկամուտների մի
մասը հարկերի միջոցով դուրս և քաշվում ու
հետո ելի նույն գյուղացուն վերադարձվում իբ-
րև մերենա գնելու վարկ, իբրև ոժանդակություն
անբերբիության դեպքում և նույնիսկ արդյունա-
բերական ապրանքներն եժանացնելու ձեռվ, ապա
այս բանը գյուղացիական տնտեսությունն ամրա-
պնդում և այն ավելի կայուն և դարձնում։ Այս
դեպքում հարկերը տնտեսությունը չեն թու-

լացնում, այլ ամրապնդում են այն, և ամրապնդում են հոգուած զուղղացիական լայն մասսաների, թուլացնելով նրանց կախումը մասնավոր կապիտալիստից:

Հարկերի մասին խոսելիս մենք ցուց ավինք, թե տնտեսական ասպարիզում ինչ դեր ունի միջոցների կենտրոնացումը (կուտակումը) պետության ձեռքում՝ այն ժամանակ, յերբ ջոկ-ջոկ քաղաքացիների ձեռքում ցրված՝ մանր-մունք ուղղվիներն ու կոպեկները կազմակերպվում, վորոշ կապիտալ են դառնում և հոգուած տնտեսության են ոգտագործվում։ Այսպիսի կենտրոնացման միջոց են հանդիսանում նաև ներքին փոխառությունները. փոխառություններին մասնակցելու միջոցով առանձին քաղաքացիները պետությանը հնարավորություն են տալիս իր ձեռքում աչքի ընկնող չափով միջոցներ կենտրոնացնելու և բոլոր այդ միջոցներն ամբողջ տնտեսությունն ամրապնդելու համար գործադրելու։ Կապիտալիստական յերկրներում ներքին փոխառությունները լայն կերպով են կիրարկվում, իբրև ընակչության խնայողությունները պետության կարիքների համար ոգտագործելու միջոց։ Բայց այդ միջոցների ոգտագործումն աշխատավոր մասսաների ոգտին չի գնում, — գլխավոր գումարները վարչական ապարատի ամրապլնո-

ման և բուրժուազիայի պաշտպանության համար են գնում (մեզնում ցարական կառավարությունն ազնվական հողատիրությունը փոխառությունների ու պետական բյուջեի հաշվին եր պաշտպանում): Նույնիսկ այն միջոցները, վորոնք ինայտ կան գանձարկդ ավանդ ելին դրվում և վորոնք, իրոք, աշխատանքի կոպեկների գումար ելին հանդիսանում, — նույնիսկ այդ միջոցներն ել աշխատավոր մասսաների կարիքների համար չելին, այլ նրանց թշնամիների պաշտպանության համար ելին գործադրվում։

Նեղին անցնելու հետ միասին, իբրև ժողովրդական տնտեսության ամրապնդման միջոց, մեր առջև փոխառություններն ոգտագործելու հարցի անհրաժեշտությունը ծառացավ։

Փոխառությունները շատ են թեթևացնում պետության ֆինանսական միջոցները, հնարավորություն են տալիս զգալի չափով միջոցներ ծախսել տնտեսության առանձին կողմերը բարեկալու համար, վորոնք միանվագ խոշոր ծախսեր են պահանջում (շտեմարանների (եկասոր) վերականգնում, յերկաթուղիների նորոգումն և այլն)։ Բայց, միաժամանակ, ժողովրդական արևտեսության համար մեծ նշանակություն ունեն նաև արտաքին փոխառությունները։ Կապիտալիստական պետությունների աչքի ընկնող մասն

ուրիշ լեռկրների հսկայական գումարն եր ե
պարտ։ Ամբողջ Յեվրոպան կախումն ունի Ամերիկայից, զորին պարտ են և ֆրանսիան, և Անգլիան։ Այդ կախումն առանձնապես ուժեղացավ
պատերազմի ընթացքում, յերբ բանակի համար
հսկայական գումարներ ենին ծախսվում, զոր չեր
կարելի կորզել հարկերի ու ներքին փոխառու-
թյունների միջոցով։

Յարական կառավարությունը ֆրանսիային
միքանի փոխառություններով պարտ եր ու դար-
ձալ շարունակ ներքին փոխառություններ եր
անում։ Խորհրդային կառավարությունն, ինկատի
ունենալով, զոր ցարական կառավարության կող-
մից կնքված փոխառությունները նպատակ ու-
նելին ճնշելու հեղափոխությունը և ստրկացնե-
լու աշխատավորներին կամ շարունակելու իմ-
պերիալիստական պատերազմը, — վոչնչացրեց բո-
լոր արտաքին և ներքին փոխառությունները։

Այս միջոցն ուղղված եր ժողովրդական
մասսաներ ազատազրելուն, փոխառությունների
տոկոսներ, այն բուն փոխառությունները վճա-
րելու բեռը թեթևացնելուն, ինչպես և բուրժու-
ազիային վերջնականապես զրկելու աշխատավոր
մասսաների վզի հանդուցը ձիգ տալու հնարա-
փորությունից։

Այժմ նոր փոխառության հարցն արտասահ-
մանում, ընականաբար, առաջ և բերում հները

վոչնչացնելու վորոշումը վերանայելու անհրա-
ժեշտություն, վորովհետեւ վոչ մի կապիտալիս-
տական յերկիր չի համաձայնիլ մեզ դրամ փոխ
տալ, յերաշխիք չունենալով, թե մենք կվճարենք
այդ, իսկ լավագույն յերաշխիքը հին պարտքերի
վճարումն ե։ Մյուս կողմից, մենք հիմա հնարա-
փորություն չունենք հին պարտքերը վճարելու,
իսկ յեթե հնարափորություն ունենալինք, ապա
մենք կարիք չելինք ունենա նոր փոխառություն-
ներ կնքելու։ Այսպիսով, խորհրդային կառավա-
րությունը համաձայնում ե հին պարտքերը վճա-
րել այն պայմանով միայն, զոր անմիջապես նոր
փոխառություններ տրվեն և հին փոխառություն-
ները վճարելու յերկարատեսական հետաձգումներ ստա-
նա։ Բայց ԽՍՀՄ արվելիք դրամական ոգնությունը
կապիտալիստներն ուզում են ոգտագործել իբրև
անտեսական ստրկացման մի միջոց — պահան-
ջում են ստացվածքային անհապաղ ապահովու-
թյուններ, անսեեսության վրա հսկողություն
սահմանել, առանց առարկելու՝ ֆաբրիկաներն ու
գործարանները նախկին տերերին վերադարձնել
և ազն։ Այս պահանջների ու պայմանների մեծ
մասը մեզ համար անընդունելի յէ. կապիտալիս-
տական յերկրները ձգտում են ԽՍՀՄ-ի վարկա-
փորությունից ոգտագործել իբրև անտեսապես մեզ
ստրկացնելու միջոց, իսկ արտաքին փոխառու-

թյունը մեզ հարկավոր ե իբրև տնտեսությունն
առողջացնելու միջոց։ Ուստի վոչ մի դեպքում
չե կարելի թուզ տալ, վոր փոխառությունն այն
պայմաններով կնքվի, վորոնք կապիտալիստների
կողմից են թելագրվում։

Մեր ֆինանսական քաղաքականության խրն-
դիրները ճիշտ կերպով են դրված մեր առջև։
Ժողովրդական տնտեսության արտադրողական
ուժի զարգացումը կամրապնդի նաև ֆինանսները,
կընդարձակի մեր բյուջեն։ Բայց այս հաջողու-
թյունը միշտ կախված է լինելու այն բանից,
թե վերչափ մենք պետության ձեռքում ամուր
կպահենք ֆինանսական մենաշնորհը։ Անհրաժեշտ
ե սոցիալիստական կուտակման անընդհատ պրո-
ցեսս, առանց վորի անհնարին ե մեր տնտեսու-
թյունը նոր հիմքերի վրա վերակազմել, ելեկ-
տրանացնելու մեքենանացնել այն։ Իսկ սոցիա-
լիստական կուտակումը հնարավոր ե այն ժա-
մանակ, յերբ պետությունը վարպետորեն ե ոգ-
տադործում պետական տնտեսության յեկամուտ-
ները և միաժամանակ հավաքում ե մասնավոր
տնտեսությունների յեկամուտների մի մասը,
այսինքն՝ իր հարկացին ու վարկացին քաղաքակա-
նությունը վարպետորեն ե կառուցում։

Մյուս «հրամացող բարձունքը», վորի վրա
պետք ե իենտերնացնենք մեր ուշադրությունը,

արտաքին առևտորի մենաշնորհն ե։ Այն կապիտա-
լիզմը, վորը չկարողացավ մեզ պատերազմում
հաղթել, ամեն տեսակի փորձեր ե անում մեզ
տնտեսական պայքարում հաղթելու, վորպեսզի
մեզ ճորտացնի և իրեն համար գաղութ գարձնի։
Մինչև ամբողջ աշխարհում պրոլետարիատի հաղ-
թանակ տանելը մեզնում սոցիալիզմի շինարա-
բությունը պետք է կիրարկվի՝ կապիտալիստա-
կան բոլոր յերկրների հետ փոխհարաբերություն-
ներն ամենախիստ հաշվառման յենթարկելու մի-
ջոցով։ Իսկ արտաքին առևտորի մենաշնորհը մեզ
հիմք ե տալիս թե անտեսապես և թե քաղաքա-
կանապես հակազդելու կապիտալիստների հար-
ձակմանը։

Արտաքին առևտորի ազատության դեպքում
արտասահմանական կապիտալը կիցկիվ մեր յերկիրը
և ամեն բան՝ մեր տնտեսությունը պայթեցնելու,
պետական արդյունաբերությունն ու առևտուրը
քայլակամուտ համար կանի։ ԽՍՀՄ-ից ապրանքներ
արտահանելիս մենք շահագրգուփած ենք այնպիսի
ապրանքներ արտահանելու, վորոնք մեզնում ա-
վելցուկ ունեն և վորոնք, ըստ արժեքի, ա-
պահովում են գյուղացիների և պետության վո-
րոշ յեկամուտը։

Կապիտալիստական պետությունները նեղ
սեղմած ողակով են պաշարում ԽՍՀՄ-ը։ Այդ

թյունը մեզ հաշրկավոր ե իբրև տնտեսությունն
առողջացնելու միջոց։ Ուստի վոչ մի դեպքում
չի կարելի թուզ տալ, վոր փոխառությունն այն
պայմաններով կնքվի, վորոնք կապիտալիստների
կողմից են թելադրվում։

Մեր գինանսական քաղաքականության խըն-
դիմության ճիշտ կերպով են դրված մեր առջև։
Ժողովրդական տնտեսության արտադրողական
ուժի զարգացումը կամրապնդի նաև ֆինանսները,
կընդարձակի մեր բյուջեն։ Բայց այս հաջողու-
թյունը միշտ կախված է լինելու այն բանից,
թե վնասափ մենք պետության ձեռքում ամուր
կպահենք ֆինանսական մենաշնորհը։ Անհրաժեշտ
ե սոցիալիստական կուտակման անընդհատ պլո-
ցես, առանց վորի անհնարին ե մեր տնտեսու-
թյունը նոր հիմքերի վրա վերակազմել, ելեկ-
տրանացնելու մեքենանացնել այն, իսկ սոցիա-
լիստական կուտակումը հնարավոր ե այն ժա-
մանակ, յերբ պետությունը վարպետորեն ե ոգ-
տագործում պետական տնտեսության յեկամուտ-
ները և միաժամանակ հավաքում ե մասնավոր
տնտեսությունների յեկամուտների մի մասը,
այսինքն՝ իր հարկացին ու վարկալին քաղաքակա-
նությունը վարպետորեն ե կառուցում։

Մյուս «հրամայող բարձունքը», վորի վրա
պետք ե կենտրոնացնենք մեր ուշադրությունը,

արտաքին առևտրի մենաշնորհն ե։ Այն կապիտա-
լիզմը, վորը չկարողացավ մեզ պատերազմում
հաղթել, ամեն տեսակի վորձեր ե անում մեզ
տնտեսական պայքարում հաղթելու, վորպեսզի
մեզ ճորտացնի և իրեն համար գաղութ դարձնի։
Մինչև ամբողջ աշխարհում պըոլետարիատի հաղ-
թանակ տանելը մեզնում սոցիալիզմի շինարա-
րությունը պետք է կիրարկվի՝ կապիտալիստա-
կան բոլոր յերկրների հետ փոխհարաբերություն-
ներն ամենախիստ հաշվառման յենթարկելու մի-
ջողով։ Իսկ արտաքին առևտրի մենաշնորհը մեզ
հիմք է տալիս թե տնտեսապես և թե քաղաքա-
կանապես հակազդելու կապիտալիստների հար-
ձակմանը։

Արտաքին առևտրի ազատության գեպքում
արտասահմանյան կապիտալը կխցկվի մեր յերկիրը
և ամեն բան՝ մեր տնտեսությունը պայթեցնելու,
պետական արդյունաբերությունն ու առևտուրը
քայլայելու համար կանի։ ԽՍՀՄ-ից ապրանքներ
արտահանելիս մենք շահագրգոված ենք այսպիսի
ապրանքներ արտահանելու, վորոնք մեզնում ա-
վելցուկ ունեն և վորոնք, ըստ արժեքի, ա-
պահովում են գլուղացիների և պետության վո-
րոշ յեկամուտը։

Կապիտալիստական պետությունները նեղ
սեղմած ողակով են պաշարում ԽՍՀՄ-ը։ Այդ

պետությունների ամբող գասակարգերի շահերն
անհաշորեն հակասում են Խորհրդավին Միու-
թյան վոչ միայն շահերին, այլև Միության գոյու-
թյանը, լինել-չլինելուն։ Շնորհիվ ստեղծված
հանգամանքների կապիտալիստական յերկրներն
ստիպված յեղան առժամանակ դադարեցնել Խոր-
հրդավին Միության գեմ մղվող զինված պայ-
քարը, ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերու-
թյուններ ունենալու ոգուտը և իրենց մրցակից-
ներից յետ մնալու յերկուղը, ճիշտ ե, յեվրոպա-
կան պետությունների մեծ մասին, մասսամբ նաև
ասիական պետություններին, ստիպեցին Միու-
թյան հետ քիչ թե շատ հեռու գնացող համաձայ-
նագրեր ու գաշնագրեր կնքել։ Սակայն այս բանը
չպետք է հրապուրի ու հանգստացնի մեզ։ Հենց
վոր այդ պետությունների սեփական ներքին
դրությունը թուլ տա, կարող են վերականգնել
նույնիսկ զինված հարձակումներն ընդդեմ Խոր-
հրդավին Միության։ Քանի գեռ այդ բանը չկա-
կոխվը անտեսական ճակատում և մղվում և հենց
մեր արտաքին առևտրի ճակատում։

Այստեղ մենք կապիտալիստական ողակման
հետ շոշափվող մեր ճակատն ունենք, այստեղ
մենք պայքարի խսկական ճակատ ունենք, ուր
անդադար ու տենդագին աշխատանքներ են կա-
տարվում՝ առանց մի որ կանգ առնելու։ Այժմ

արդեն գոյություն ունեցող առուծախի, առե-
տրական գործի ասպարիզում, վարկավին հա-
մաձայնագրերի, փոխատու, գրավերի, մուրհա-
կավին, արանսպորտի և ապահովագրական գոր-
ծառնությունների ասպարեզներում կապիտալիս-
տական աշխարհն ամեն որ Խորհրդավին Միու-
թյան ուժերն ե փորձում, մեր թուլ կողմերն ե
փնտուում, փորձում ե թուլ կետ գտնելու և
ճեղքվածք առաջացնելու այն պատճեշի մեջ, վորը
մենք կանգնեցրել ենք կապիտալիստական աշ-
խարհի ու մեր խորհրդավին տնտեսության միջն,
իբրև արտաքին առևտրի մենաշնորհ ու այդ ճեղք-
վածքն ամբողջ պատճեշի բացվածք դարձնելու,
մի բացվածք, վորի միջոցով կարելի յե տիրանալ
մեր ներքին եկոնոմիկավին՝ խորհրդավին տնտե-
սության մեր փորձերը խորտակելու և այդ բե
կորների վրա՝ զուտ կապիտալիզմ, մասնավոր
սեփականության տիրակալություն վերստեղծելու
միջոցով (ընկ. կրասինն արտաքին առևտրի մա-
սին)։

Արտաքին առևտրի մենաշնորհի ելությունն
այն ե, վոր ապրանքների ամբողջ արտահանու-
թյունն ու ներմուծումը վորոշ ծրագրով ե կա-
տարվում։ Այս պլանը կազմելիս մի ամբողջ
շարք պարմաններ պետք ե ինկատի ունենանք.
1) ամենից առաջ՝ պետք ե ինկատի ունենանք

մեր արդյունաշերութիւնն կարիքները թե հում
նյութի և թե գործիքներ պատրաստելու աս-
պարեզներում:

Անհրաժեշտ ե հաշվառման յենթարկել ար-
դյունաբերութիւնն ծավալումն ու հում նյութի
անհրաժեշտ պաշարները, բավականաշափ ապա-
հովել այդ պաշարներն ու այն ժամանակ միայն
ավելցուկներն արտահանել յերկրից:

Ժիաժամանակ անհրաժեշտ ե հաշվառման
յենթարկել արդյունաբերութիւնն պահանջն ար-
տադրական գործիքների ասպարիզում, պարզել
թե այդ գործիքներից վճռը չենք կարող մեզնում
պատրաստել կամ թե կարող ենք միայն թանգ
գնով շինել, ու այս հիման վրա վորոշել անհրա-
ժեշտ գործիքներ ներմուծելու ծրագիրը. 2) ար-
տահանվող հացի քանակը վորոշելիս նմանապես
հաշվառման պետք ե յենթարկենք ներքին շու-
կալի ծավալը, վորովհետև արտահանութիւնը
չափազանց մեծացնելու դեպքում ներքին շու-
կայում գները կբարձրանան, և ամբողջ ժողո-
վրդական տնտեսութիւնը կտուժի. 3) ներմուծ-
ման և արտահանութիւնն ծրագիր կազմելիս
ապրանքների արժեքը պետք ե ճիշտ հաշվառման
յենթարկենք այն հաշվով, վոր ներմուծումը չգե-
րազանցի արտահանութիւնը, վոր արտասահմա-
նյան վաճառականների հետ հաշիվ տեսնելիս

ստիպված չլինենք լրացուցիչ կերպով վոսկիներ
վճարելու և այդպիսով թուլացնելու մեր դրամա-
կան տնտեսութիւնն կայունութիւնը:

Արտաքին առևտրի մենաշնորհն ոգնեց մեղ՝
դրամական ռեֆորմ կիրառելու, ֆինանսներն
ամրապնդելու, Շնորհիվ մենաշնորհի մենք կա-
րող ենք մեր արտադրությունն ընդարձակել
գուղատնտեսութիւնն համար գործիքներ ներմու-
ծել և այն:

Վերջապես, մեղ համար խոշոր նշանակու-
թիւն ունի տրանսպորտի և կապի ազգայնացու-
մը. Այս բանը հնարավորություն ե տալիս ամ-
բողջ տնտեսութիւնն վրա մշտական հսկողություն
սահմանելու և, ամենից առաջ, առևտրի վրա:
Հոգուտ տնտեսութիւնն փոխադրության տարիփ-
ներ սահմանելը, առանձին շրջաններում այդ
տարիփները փոփոխութիւն յենթարկելը—այս
բոլորը պետությունը հնարավորությունն են տա-
լիս ուժեղացնելու տնտեսութիւնն դեկավարու-
թիւնը:

Այսպիսի «հրամայող բարձունքներ» ունի
Խորհրդագին պետությունը: Այդ բարձունքների
ամբողջությունը սոցիալիստական տնտեսությունն
այնպիսի պայմանների մեջ ե դնում, վորոնք
հեշտացնում են շուկայում մասնավոր կապիտա-
լի դեմ մղվող պայքարը և ոժանդակում արտա-
դրողական ուժերի զարգացմանը:

Պետության՝ տնտեսության առանձին ճյուղ՝ զերը մի ամբողջության մեջ պետք ե հավաքենք, ամբողջ տնտեսությունը պետք ե միասնական լինի: Այս միասնականությունը ճեռք ե բերվում առանձին ճյուղերի պլաններ պատրաստելով ու այդ պլաններն իրար հետ կապելով. արդյունաբերության աշխատանքների ծրագիրն առևտրի ու վարկավին բանկերի ծրագրի հետ պետք ե կապվի. յերկաթուղիների ծրագրերը պետք ե կազմվեն այն բեռների քանակի հաշվառման վրա, վոր մեր արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունն են տալիս, և այն: Պրոլետարական պետությունը, վոր սոցիալիզմ ե կառուցում, չի կարող թույլ տալ, վոր տնտեսությունը տարերային կերպով զարգանա. նախ՝ այն պատճառով, վոր այն ժամանակ, ինչպես առաջուց ասել ենք, սոցիալիզմի հաղթանակն ապահոված չի լինի, և, յերկրորդ՝ այն պատճառով, վոր սոցիալիզմի շինարարության համար արտադրողական ուժերի մի մասն անողութ կծախսվի:

Հաշվի առնելով ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերը, մենք կարող ենք, հոգուտ սոցիալիզմի շինարարության, ավելացնել մեկի զարգացումն իհաշիվ մտուաի, միջոցները մեկ ասպարիզում տնտեսել, մի ուրիշ ասպարեզ դնել: Պահանջն կերպով աշխատելիս մենք կարող ենք

արագացնել գյուղացիական տնտեսության զարգացման պրոցեսը և թուլացնել մասնավոր կապիտալի ազգեցությունը: Մեր շինարարական ասպարիզում անցյալ շրջանում ունեցած հաջողություններն արդեն ապացուցել են, վոր մեր տնտեսության կազմակերպումն ու տնտեսական քաղաքականությունը ճիշտ են: Տնտեսությունն ամրապնդվել և նախապատերազմական մակարդակին ե հասել:

Միաժամանակ վերականգնած այդ տնտեսության ներսում տեղի է են ունեցել վերակազմություններ, վորոնք ապահովում են սոցիալիզմի համար մղվող հետազա պարզաբը: Մինչդեռ 1921 թ. սոցիալիստական տարերն ամբողջ տնտեսության մի աննշան մասն ելին կազմում, արդյունաբերությունը թույլ եր աշխատում, վարկավին սիստեմ բոլորովին գոյություն չուներ, կոռպերացիան քաղաքացիական կոիվսերի տարիներում կործանվեց, ա ժմ պետության ձեռքում ե կենարոնացած $11\frac{1}{2}$ միլիարդ կապիտալը, մինչդեռ մասնավոր, բաժան-բաժան յեղած տնտեսության ձեռքում—միայն $7\frac{1}{2}$ միլիարդ ե, վորոնք մենք պետք ե կազմակերպենք (գյուղացիական տնտեսությունը) կամ տնտեսական պարզաբում պետական ֆոնդերը լցնենք (մասնավոր կապիտալը): Շուկայի տարերայնու-

թիան վտանգն աչքի ընկնող չտփով վերացված է, հետագա պալքարն ավելի խաղաղ հանգամանքներում կընթանա, յերբ մենք արդեն 1913 թ. մակարդակի սահմաններից այն կողմը կդնանք:

5. ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՍՈՑԻԱԼԻԶՄԸ

Մեր անտեսության «հրամացող բարձունքներն» այն գենքն են, զորով մենք կովում ենք սոցիալիզմի համար: Այդ կոմիս ուղղված է մեր ամբողջ տնտեսությունը զարգացնելուն, արտադրության ու բաշխման ասպարեզներում անարխիան վոչնչացնելուն, շահագործման և արտադրության գործիքների մասնավոր սեփականությունը վոչնչացնելուն: Սոցիալիստական տնտեսությունն ամրապնդելու ընթացքում մենք կճշնշենք մասնավոր կապիտալը, կնեղացնենք վերջինի տնտեսական ասպարեզն այնքան, մինչև զոր սոցիալիստական տնտեսությունն ընդգրկի ամբողջ տնտեսական կյանքը, ու մենք կարողանանք բոլորովին հրաժարվել մասնավոր կապիտալից:

Բայց յեթե մասնավոր կապիտալի գեմ մըդվող պալքարում մեր խնդիրը սոցիալիստական տնտեսության միջոցով մասնավոր կապիտալը վտարելն է, հետզհետե ու միանդաման այդ կա-

պիտալը վոչնչացնելն է, ապա զյուղացիական մանր տնտեսության նկատմամբ մեր առջև մի ուրիշ խնդիր է ծառացած, մենք պետք են վերակազմենք այդ տնտեսությունը և փոքր ու տեխնիկապես հետամնաց տնտեսությունից խոշոր, կուլտուրական, որգանապես պետականի հետ կապված տնտեսություն դարձնենք: Այս փոխարկումը վոչ թե վարչականորեն ձնշելու, այլ տնտեսական ղեկավարության միջոցով պետք է կատարվի: Մենք պետք են այնպիսի հանգամանքներ ստեղծենք, զորոնք զյուղացիական տնտեսությունն առաջ մղեն մանր տնտեսությունների համախմբման ուղիով, զոր պետական տնտեսության հետ անմիջական կապ ունենալը զյուղացիության համար ձեռնտու դարձնեն:

Այն բանից հետո, ինչ զոր մենք ասացինք, արդեն պարզ է, թե այդ աշխատանքի ասպարիզում ինչ նշանակություն ունեն տնտեսության խնդուստրիացումը, ելեկտրիֆիկացիան, առեստրի կազմակերպումը, Գյուղացիությանն արդյունաբերական ազգանքներով ապահովելը, գործիքներ մատակարարելը, կենդանի ինվենտարն ելեկտրական եներգիայով փոխարինելը, զյուղացիության համար բոլոր անհրաժեշտ ապրանքները ցածր գներով ու արագ հասցնելը, — այս բոլորը կնպաստեն զյուղացիական տնտեսության հետ

ունեցած կապի ամրապնդմանը։ Յեվ, միաժամանակ, այս բոլորը գյուղացիական տնտեսությունն առաջ կմղեն համախմբման ուղիով։ Կոռակերատիվ խանութ կազմակերպեն իր շուրջն ե համախմբում փայտերերին, նրանց հետաքրքրում ե իրենց ընդհանուր գործի աշխատանքով, ստիպում ե միջոցները խնայողաբար ծախսել. ելեկտրիֆիկացիա անցկայնելը տնտեսապես միացնում ե տնտեսությունների մի ամբողջ խմբակ, հանրացնում ե արտադրության գործիքները, վոչչացնում ե մանր տնտեսությունները և այս բոլորը գարձրում ե մի հզոր ամբողջություն, իսկ գյուղացիների խմբովին արակտոր գնելը համախմբում ե նրանց արտադրությունը, ամրապնդում ե տնտեսությունն ու այն ավելի արտադրողական դարձնում։

Բայց գյուղացիական տնտեսությունը վերակազմելու համար մղվող մեր պայքարում բացառիկ կարևոր դերը գյուղատնտեսական կոռպերացիան ե ձեռք բերում։ Գյուղատնտեսական կոռպերացիան ոժանդակում ե գյուղացիական մանր տնտեսությունը խոշոր, կոլեկտիվ տնտեսության վերածելուն։

Հենինը 1923 թ. գրել ե, մատնանշելով կոռպերացիակի նշանակությունը. «Պետության իշխանությունն արտադրության բոլոր խոշոր միջոցների վրա, պետության իշխանությունը՝ պրոլե-

տարիատի ձեռքում, այս պրոլետարիատի միությունը միլիոնավոր մանր ու մանրագույն գյուղացիների հետ, յերաշխիք պրոլետարիատի ղեկավարության՝ գյուղացիների նկատմամբ և այլն, — միթե այս չի այն բոլորը, ինչ վոր հարկավոր ե այն բանի համար, վոր կոռպերացիալից, միմիայն կոռպերացիալից, վորին մենք առաջ արհամարհանքով ելինք վերաբերվում, իբրև չարչիականի, և վորին վորոշ տեսակետից իրավունք ունենք այժմ, ՆԵՊ-ի պայմաններում նույնպես արհամարհանքով վերաբերվելու — միթե սրանք կատարելապես սոցիալիստական հասարակություն կառուցելու համար անհրաժեշտ բոլոր բաները չեն։ Այս գեռ սոցիալիստական հասարակություն կառուցել չի, բայց այս այն բոլորն ե, ինչ վոր անհրաժեշտ ե ու բավարար այդ կառուցման համար»։

Ահա հենց այս հանգամանքը մեր շատ աշխատակիցների կողմից թերագնահատված ե։ Մեզնում կոռպերացիակի վրա արհամարհանքով են նայում, չհասկանալով այն, թե ինչ բացառիկ նշանակություն ունի այդ կոռպերացիան առաջինը՝ ոկզբունքային տեսակետից (արտադրության միջոցների սեփականությունը պետության ձեռքում), յերկրորդը, ըստ հնարավորության, գյուղացու համար ավելի պարզ, հասարակ ու մատ-

չելի միջոցներով սոր կարգերի անցնելու տեսակետից:

Պետական տնտեսությունը, «հրամայող բարձունքները», անցյալ շրջանում այն աստիճան ամրապնդվեցին, վոր անկազմակերպ շուկալի տարերացին զարգացման վտանգը թուլացավ: Գյուղացիական տնտեսության արտադրողականությունը նախապատերազմական մակարդակին ե հասել. Անհրաժեշտ ե ոժանդակել գյուղացիական մթերքների հետագա զարգացմանը: Բայց այս զարգացումը չպետք ե կատարվի գյուղի միջակներին ու չբավորներին ստրկացնող, իբրև հականեղափոխական ու սոցիալիզմին թշնամի ուժ զարգացող՝ կուլակ խավերին միջոցներ կուտակելու կատարյալ ազատություն տալու ճանապարհով: Ընդհակառակը, անհրաժեշտ ե ոգնել միջակ և անենաչքավոր գյուղացիության զարգացմանն ու ամրապնդմանը, կազմակերպելով նրանց կուլակների դեմ մղվող պաքարի գործում, ամրապնդելով նրանց արտադրությունը՝ ավելի արդյունավետ դարձնելով այն և միաժամանակ սերտ կապելով այդ արտադրությունը պետական սոցիալիստական տնտեսության հետ:

Քանի դեռ մեր տնտեսությունը թուլ եր, գյուղի արտադրողական ուժերի զարգացման ասպարիզում ազատություն տալ մենք չենք կա-

րողանում, վորովհետեւ կուլակությունը կոդտագործեր գյուղացիության հիմնական մասսային սկզբից անտեսապես, իսկ այնուհետև՝ նաև քաղաքականապես իրեն հնազանդեցնելու հնարավորությունը: Բայց այժմ շատ բան ե փոխվել, — կազմակերպված պետական տնտեսությունը մաս նավորից, բաժան-բաժան յեղածից խոշոր ե և համարձակ կերպով կարող ե պաքարի դուրս գալ գյուղացիության կազմակերպման համար: Այս պաքարում մենք միջակներին ու չքավորներին կազմակերպում ենք կոոպերացիայի ասպարիզում, համախմբում ենք նրանց տնտեսությունները հոգուտ անձնական բարեհաջողության, նրանց յեկամտի բարձրացման և հոգուտ հին արորի վտարման՝ տրակտորի և ելեկտրական մեքենայի կողմից:

Մանը տնտեսությունները կոոպերացիայի միջոցով համախմբելու ճանապարհը բազմազան ե և հսարափորություն ե տալիս մանը տնտեսություններ ներգրավելու, հետզհետեւ ավելի ու ավելի սերտ կապելով այդ տնտեսություններն իրար հետ: Յեթե գյուղացին տեսնի, վոր կողեկալիվ միջոցով մթերքների սպառումն իրեն ձեռնուու լի, նա հետեւալ քայլն ել կանի - կսկսի կոլեկտիվ կերպով վոչ միայն սպառել, այլև արտադրության գործիքներն ոգտագործել: Կոլեկտիվ

տնտեսություններն ու կոմմունաները պետք ե
ոգտագործել անտեսական գործնական պրովա-
գանդի համար, համախմբելով մանր տնտեսու-
թյունները։ Իսկ դրա համար պետք ե այդ տըն-
տեսությունները տեխնիկապես սարքավորված
լինեն, պետք ե լայն կերպով ոգտագործեն շըր-
ջապատի գյուղացիությունը, լավ սերմեր տա-
րածեն, բեղմանավորման կայաններ ունենան,
կուլտուրական պրոպագանդ մղեն։ Կոլեկտիվ
տնտեսությունները վոչ միայն իրենց իրավական,
այև տեխնիկական կազմակերպությամբ պետք ե
գյուղատնտեսական կոռակերպացիալի բարձրագույն
ձեր լինեն։ Յեվ մենք նկատում ենք, վոր վեր-
ջին տարիներում, նրանից հետո, յերբ պատահ-
մամբ առաջացած կոմմունաները վոչչացան, իս-
կական կոլեկտիվ տնտեսությունների գարգա-
ցումն ե սկսվում։ Սակավոր գյուղացիու-
թյունն սկսում ե հասկանալ, վոր ինքը միացյալ
ուժերով միայն կարող ե մշակել իր հողը, ունե-
նալ կենդանի ու մեռյալ ինվենտար։

Գյուղացիական տնտեսության ասպարիզում
մթերքներ արտադրելու և սպառելու համախմբու-
մից պակաս նշանակություն չունի նաև վարկի
հարցը։ Նախքան հեղափոխությունը գյուղա-
ցիությունը կախումն ուներ կուլակ-վաշխառուից,
վորը բարձր տոկոսներով նրան միջոցներ եր

տրամադրում մինչև բերքի իրացումը, վորովհե-
տև գյուղացին ուրիշ չելք չուներ։

Կալից-կալ գյուղացին շըջանառության մի-
ջոցների կարիք ե զգում, վորը նա կարող ե վե-
րադարձնել միայն իր հացը ծախելուց հետո*,
իսկ կուլակն ել, ոգտվելով անելանելի դրությու-
նից, մինչև այդ ժամանակ եր նրան պարտք տա-
լիս՝ գնելով կանգնած արտը, գատեցնելով իր
մոտ կամ խոշոր տոկոսներ առնելով։ Գյուղա-
տնտեսական վարկը կարևոր ե մանավանդ այժմ։
Այդ վարկը կարևոր ե այն բանի համար, վոր
առանց դրան գյուղացին ելի կուլակի ճանկն ե
ընկում, վորն ոգտագործում ե կապիտալ կու-
տակելու համար ստեղծված հնարավորությունը։

Վարկը հարկավոր ե տնտեսությունը վերա-
կանգնելու և այն ոգտագործելու համար, և վոչ
թե իբրև բերքից-բերք շըջանառության կապի-
տալ։ Թուլացած գյուղացիական տնտեսությունն
առանց ոգնության, առանց վարկի հնարավորու-
թյուն չունի գութաններ, հնձող ու ցանող մե-
քենաներ և լծկան դրստելու։ Իսկ ինվենտար և
անասուններ ձեռք բերելն ամեն մի գյուղացու
հնարավորություն ե տալիս միանգամից շարժվե-
լու մեջալ կետից և ընդարձակելու իր տնտե-

* Հայաստանում մասամբ նաև բամբակն ու խաղողը ծախե-
լուց հետո։

սությունը։ Վարկը կարեոր և մանավանդ պետք յեղած մոմենտում, յերբ միջոցներ չունենալը ծանր կերպով և հարգածում անտեսությունը, իսկ իր ժամանակին հասցրած ոգնությունը հնարավորություն և տալիս խուսափելու այդ հարգածից։

Միացյալ գյուղացիական տնտեսությունները կոռպերացիավի միջոցով անմիջականորեն սերակապվում են պրոլետարական տնտեսության հետ, և մասնաշոր կազմիտալը, իբրև միջնորդ, ընկնում եւ Տեխնիկական սարքավորումն ու ելեկտրիֆիկացիան նպաստում են կոռպերատիվ «հացի ֆաբրիկաների», ձիթհան, ոսլայի և այլ գործարանների կազմակերպմանն ու այդպիսով գյուղատնտեսությունը փոխակերպում և այն սոցիալիստականի վերածում։ Բնկ. Բուխարինն իր գեղեցիկ գրքում սոցիալիզմի ուղիի մասին գրում եւ. «Գյուղացիական տնտեսությունները հետզհետե իրենց սեփական բնությունը փոխակերպում, պետական արդյունաբերության հետ միանում, ել ավելի խոշոր ամբողջության մեջ են միաձուլվում։ Իսկ անտեսական այս ձևի շղթան, վոր կազմակերպված և իր բոլոր ճյուղերում, իր ելությամբ հենց սոցիալիզմ եւ։

Այս միջոցով ենք մենք դեպի սոցիալիզմ գնում, չնայած այն անտեսական ու տեխնիկա-

կան հետամնացությանը, վորով մեր յերկիրը դեռ աչքի յե ընկնում։ Իհարկե, աստեսական ու տեխնիկական հետամնացության պայմաններում այդ ճանապարհը շատ ե յերկար։ Բայց և այնպես այդ ճանապարհն ե ուղիղը, մի ճանապարհ, վորով մենք դեպի սոցիալիզմը կցնանք, յեթե միայն գյուղացիության նկատմամբ միշտ քաղաքականություն վարենք»։

6. ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ՅԵՎ ԽՆԱՅՈՂՈՒԹՅԱՆ ՌԵԺԻՄԸ

Մեր սոցիալիստական տնտեսության զարգացումը և, ամենից առաջ, ամբողջ արդյունաբերության զարգացումը կարող է առաջ գնալ միջոցները պետական ձեռքում կուտակելու դեպքում միայն, այն միջոցները, վոր անհրաժեշտ ե արտադրության մեջ դնել։ Կապիտալիստական յերկրներում բուրժուազիան բանվոր դասակարգն շահագործում ու հավելյալ արժեք է ստանում, վորը մասսամբ ծախսում ե, մասսամբ ել նորից արտադրության մեջ ե գնում՝ ընդարձակելով այն և ամրապնդելով իր իշխանությունը։ ԽՍՀՄ-ում բանվոր դասակարգը հավելյալ արդյունք է արտադրում, վորը վոչ թե մասնավոր ոգտագործման ե գնում, այլ սոցիալիստական

կուտակման գոնդի մեջ ե մանում, վորն ամբողջ տնտեսության զարգացումն ե ապահովում։

Ամբողջ արտադրության և հասարակական կյանքի սոցիալիստական վերաշնուրթյան ուղին այն կուտակման ուղին ե, վորը միջոցներն արտադրության մեջ ե գնում։

Այն բոլորը, ինչ վոր ամեն մի աշխատավոր իր ծախսածից ավելի յե ստեղծում, սոցիալիստական կուտակման մի կաթսալի, մի ընդհանուր ֆոնդի մեջ պետք ե մտնի. այդ գոնդը հնարավորություն կտա նոր ֆարբիկաներ շինելու, ելեկտրիֆիկացիա անցկացնելու, գլուղատնաեսությունը մեքենաներով ու գործիքներով մատակարարելու։ Այստեղ ամեն մի առանձին բանվոր հանդես ե գալիս իբրև կոլեկտիվ կուտակման մասնակից, նա իր հավելված աշխատանքը տալիս ե հավելված արդյունք ստեղծելու գործին, վորը սոցիալիստական այնպիսի գոնդ ե գոյացնում, վոր տնտեսությունն ամրապնդելու համար ե գնում։

Անհրաժեշտ միջոցների կենտրոնացումը պետության ձեռքում հնարավոր ե միայն խնայողության, արդյունքի բարելավման, եժանացման և արդյունաբերության ու գլուղատնաեսության ասպարեզներում արտադրողականության բարձրացման ու մասնավոր կապիտալի հաշվին կուտակում անելու միջոցով։

Այժմ մենք ամեն տեսակի միջոցներ ենք ձեռք առնում, վոր մեր արդյունաբերությունն առավել չափով արտադրական լինի, վորպեսզի վերադիր ծախսերն իջեցվեն, վոր մեր բյուջեից դուրս շարավին բոլոր այն ծախսերը, վորոնք կուտակումը բչացնում և տնտեսական զարգացմանն արգելվ են դառնում, Խորհրդավին կառավարությունը խնայողության ոեժիմ ե հայտարարել։ Հատուկ դիմումով Համ. Ժողկոմիորնն ու Համ. Կ. Կ.-ի Կ. Կ. մատնանշում են. «Խնայողության ոեժիմը յերկրի ինդուստրիացման արդի պայմանների զարգացման ասպարիզում կուտակության քաղաքական ամենակարեսոր խնդիրներից մեկն ե։ Խնայողության ոեժիմը յելակետ ունի այն, վոր մեր ինդուստրիան ի հաշիվ իր սեփական միջոցների չի կարող պատշաճ արագությամբ զարգանալ, վոր ինդուստրիալի համար հավելված միջոցներ են հարկավոր Խնայողության ոեժիմը յելակետ ունի այն, վոր հավելվալ այդ միջոցները պետք ե վերցվեն մեր յերկրի ներսից։ Խնայողության ոեժիմ նշանակում ե, վոր տնտեսություն անելու և կառավարելու այժմյան ձևերի ժամանակ, այժմյան թանգության և մեր ապահարատի բյուրոկրատիզմի ժամանակ մենք այդ միջոցները չենք ունենալ, Խնայողության ոեժիմ նշանակում ե, վոր պետք ե առավելագույն

չափով կրծատել, եժանացնել, հեշտացնել մեր
արանապորտի, առևտրական, կոռպերատիվ, վար-
չական այլ ապարաբաները, վորպեսզի այժմ
աղատած լինենք և հետագայում ևս աղատենք
հարցուրափոր միլիոն ոռութիներ և այդ միլիոնները
յերկրի ինդուստրիացման գործի վրա դնենք»:

Վոչ միայն արգունաբերության, այլև գյու-
ղատնտեսության շինարարության անհրաժեշտ
պարմանը տեխնիկական հեղափոխությունն է։
Առանձին գյուղացիական տնտեսությունը միայն
վորոշ աստիճան կարող է զարգանալ և տեխնի-
կապես բարձրանալ. առանց ջոկ-ջոկ մանր տնտե-
սությունների համախմբման անհնարին են
տրակտորացումը, ելեկտրիֆիկացիան, ընդարձակ
բարելավումը (մելլորացիա)։

Գյուղացիությունն ինքը տնտեսականորեն
շահազրդոված է, վոր բաժան-բաժան լեղած ա-
ռանձին միջոցները, վորոնք նստած են ամեն մի
առանձին տնտեսության մեջ, կենտրոնանան,
խոշորանան և վերագրանան իրեն՝ իրեն մեքե-
նաներ, տրակտորներ, ելեկտրական սարքավորում
և այլն։ Գյուղացիական մասսան, ինարշե, այս
բանը չի գիտակցում և բավականաշափ ակտիվ
մասնակցություն չի ցուց տալիս մանր կապի-
տալները մեջ քաշելու ան ձեւրին, վորոնք գո-
յություն ունեն մեզնում, - փոխառություններ և

խելացողական գանձարկներ։ Ուստի պետության
առաջ ինդիք ե ծառանում—հարկալին ճանապար-
հով գյուղացիական տնտեսություններից միջոց-
ներ մեջ քաշել։ Հարկերը նպաստում են միջոց-
ների համախմբմանը, հոգուտ ժողովրդական
տնտեսության։

Ենչպես, ինչպես բանվորը, ցածր աշխատա-
վարձ ստանալով և 8 ժամ աշխատելով, իր բան-
վորական ժամանակի ու աշխատանքի մի մասը
հավելյալ արգունք ստեղծելու գործին և տա-
լիս, - գյուղացին ել իր աշխատանքի, իր արդյուն-
քի մի մասը հոգուտ պետական շահերի, սոցիա-
լիստական կուտակման, պետական ընդհանուր
ֆոնդին պետք է տա։

Պետության կողմից կուտակված միջոցներն
անհապաղ, մաս-մաս վերադառնում են գյուղա-
ցիությանը՝ գյուղատնտեսական վարկի, մեքենա-
ների, բարելավման (մելլորատիվ) աշխատանքների
ձևով։ Այդ միջոցների մի մասն ել (չհաշված
պետական վարչական ապարատ), դպրոցներ և
այն պահելու ծախսը) պետք է գնա նաև ար-
դյունաբերությունն ամրապնդելու գործի համար,
այն չափով, վոր չափով գյուղացին շահագողու-
ված և արդյունաբերական ապրանքների ստա-
ցումով։ Չի կարելի, վոր սոցիալիստական կու-
տակման ամրող ծանրությունը բանվոր դասա-

կարգի վրա ընկնի, — զբուղացիությունը նույնպես շահագրգուված է արտադրական ուժերի զարդացմամբ և պետք է ինքնասահմանափակման միջոցով մասնակցի կուտակման սրբոցեսսին:

Ապրանքի այն սովը, վորը մենք ենք վերապրում, ցուց ե տալիս, վոր գյուղում ազատ միջոցներ կան, վորոնց շնորհիվ արդյունաբերական ապրանքների վերաբերմամբ լեղած գյուղացիական պահանջն անց ե կացել այդ ապրանքների վերաբերմամբ արվող առաջարկությունից: Նոր ֆարբիկաներ շինելու և ներկայումս բանողների արտադրողականությունը բարձրացնելու համար մեր արդյունաբերությունը բավարար չափով միջոցներ չունի: Սրբունաբերությունն ընդարձակելու միջոցները պետք է լինեն ինաշխվ ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերի, վորոնց թվում և ի հաշիվ գյուղատնտեսության, վորը, միևնույն ե, առանց հզոր արդյունաբերության չի կարող զարգանալ Բայց գյուղի գյուղացիական տնտեսությունից միջոցներ վերցնեն այնպիսի կազմակերպվածությամբ պետք է ընթանա, վոր տնտեսության գլխավոր հիմքը քանդիլ, վորակեսզի հարկերի գլխավոր ծանրությունը գյուղացիների ուներ, հարուստ դասերի վրա ընկնի, գլխավորապես կուլակների, այն գասերի վրա, վորոնք, իվաստ ընդհանուր ժողովրդական

տնտեսության շահերի, աչքի ընկնող չափով միջոցներ են կուտակում, իրեն ազդեցության տակ գցելով չքավոր գյուղացիությանը: Սրա համար ենք մենք այժմ զբուղատնտեսական հարկի գանձման կարգը վերակազմել, այդ հարկի չափերը, իհաշիվ գյուղացիության վերին խավերի հարկադրման, մեծացրել: Սրա համար ենք մենք քաղաքականապես կազմակերպում չքավոր և միջակ գյուղացիությունը, ամրապնդում նրանց հասարակական և տնտեսական ազդեցությունը գյուղի նկատմամբ:

Համ. կ. կ. XIV համագումարի և կենտրոնական կոմիտեի պլենումի աշխատանքների գումարը տալով ընկ. Ստալինը մեկիկ-մեկիկ թվում և սոցիալիստական կուտակման ուղիներն ամրողացությամբ: —

«Թուություն ունեն կուտակման մի շարք աղբյուրներ, վորոնցից հարկավոր և նշել գոնելիսավորները:

«Առաջին: Անհրաժեշտ ե, վոր չերկրում կուտակված ավելցուկները ցիր ու ցան չլինեն, այ վարկավին՝ կոռպերատիվ և պետական հիմնարկների մեջ, այն փոխառությունների կարգով հավաքվեն, ոգտագործելով այդ ավելցուկները, ամենից առաջ արդյունաբերության կարիքների համար. պարզ ե, վոր դրա համար ավանդատու-

ները վորոշ առկոս պետք է ստանան: Զի կարելի
առել, վոր այդ ասպարիզում գործը մեզնում
փոքրիշատե բավարար կլինի: Բաց մեր վար-
կալին ցանցի բարելավման խնդիրը, բնակչու-
թյան աշքում վարկալին հիմնարկների հեղինա-
կությունը բարձրացնելու խնդիրը, ներքին փո-
խառությունների գործի կազմակերպման խնդի-
րը, անշուշտ, ծառացած և մեր առաջ, իբրև
հերթական խնդիր և, ինչ գնով ել լինի, ձենք
պետք է լուծենք այդ խնդիրները:

Յերկորդ: Անհրաժեշտ է, վոր խնամքով
ծածկեն բոլոր այն ծակուծուկերը, վորոնց մի-
ջոցով յերկում կուտակված ավելցուկի մի մասը
մասնավոր կապիտալի զրագանն և գնում, իմաս
սոցիալիստական կուտակման: Դրա համար պետք
է գների այնպիսի քաղաքականություն վարել,
վորը մեծածախի ու մանրածախի գների միջն
փլուզում չստեղծի: Պետք է ամեն տեսակ մի-
ջոցներ ձեռք առնել՝ արդյունաբերական ապրանք-
ների մանրածախի և զուղատնաեսական մթերք-
ների գներն իշեցնելու, վորպեսզի կասեցնենք,
կամ առնվազն, մինիմումի հասցնենք կուտակման
ավելցուկների՝ մասնավորի գրագանն անցնելը:
Այս հարցը մեր անտեսական քաղաքականության
ամենակարևոր հարցերից մեկն է: Այսուղից ե
զայլս թե՛ մեր կուտակման գործի և թե՛ չերփո-
նեցի համար լուրջ վտանգներից մեկը:

Յերրորդ: Անհրաժեշտ է, վոր հենց արդյու-
նաբերության ներսում, իր ամեն մի ճշուղի աս-
պարիզում վորոշ պաշտրներ լիտ զրվեն՝ ձեռ-
նարկությունների շիշեցման (ամորտիզացիա), սրանց
ընդարձակման և հետագա զարգացման նպատա-
կով: Այս բանն անհրաժեշտ է ու բացարձակ
կարևոր գործ, ինչ գնով ել լինի, այն պետք է
առաջ տանել:

Չորրորդ: Հարկավոր է, վոր յերկիրն ամեն
տեսակ պատահարներից (անբերբիությունից)
ապահովազրելու, արդյունաբերությունը մատա-
կարաբելու, զյուղանաեսությանն ողնելու, կուլ-
տուրան զարգացնելու և այն համար պետության
ձեռքում վորոշ ուղերժներ կուտակվեն: Այժմ ա-
ռանց ուղերժների ապրելն ու աշխատելն անհնա-
րին է: Նույնիսկ զյուղացին իր փոքրիկ անտեսու-
թյունով այժմ առանց վորոշ ուղերժների չի կա-
րող յոլա գնալ: Մեծ յերկրի պետությունը, առա-
վել ևս, առանց ուղերժների չի կարող յոլա գնալ:

7. ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՅԵՎ ՈՐՈՌՁԻՑԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

Սկսած Հան. կ. կ. (թ.) XIV համագու-
մարից ու մինչև այժմ կուսակցության անդամ-
ների առանձին խմբակներ փորձել են ապացու-

ցեր, վոր մեր քաղաքականությունը սխալ է, վոր մենք սոցիալիզմի շինարարություն չունենք ու կործանման շեմքին ենք գանգում, վոր կուսակցության կ. կ. սխալ է հասկանում լենինիզմի հիմունքները:

Ոպպողիցիալի հիմնական սխալն այն է, վոր չի հասկանում գյուղացիների դերն ու նշանակությունը հեղափոխության մեջ՝ նաև կապիտալիզմից սոցիալիզմին անդնեռու ժամանակ։ Ոպպողիցիան վերագնահատում է գյուղի կուլակի դերը, հաշվի չառնելով այն, վոր գյուղավոր մասսան միջակ գյուղացիությունն է, և պահանջում է վոչ թե գյուղացիական տնտեսության վերաշնուրություն, այլ այդ տնտեսության վտարումն։

Ոպպողիցիան առաջարկում է գյուղացիության վրա նայել վոչ իրեն պրոլետարիատի դաշնակցի, այլ իրեն հակառակորդի վրա, վորի դեմ պետք է կովել, վորից միջոցներ պետք է դուրս քաշել՝ բարձր հարկերի միջոցով, արդյունաբերական ապրանքների գները բարձրացնելու միջոցով և այն։

Ոպպողիցիան չի հավասում այն բանի, վոր սոցիալիստական արդյունաբերությունն ու բոլոր «հրամայող բարձունքները» մեզ համար ապահովում են գյուղացիության դեկավարումը պրոլետարիատի կողմից, միաժամանակ, ոպպողիցիան

հայտարարում է, վոր մեր անտեսական սխակեմն ամբողջովին պետք է անվանել «պետական կապիտալիզմ», վոր մեր արդյունաբերությունը սոցիալիստական արդյունաբերություն չի։

Մենք արդեն ասացինք, թե ինչու յէ մեր արդյունաբերությունը սոցիալիստական, և ինչպես պետք է հասկանալ այդ։

Մեր արդյունաբերությունը պետկապիտական անվանել չի կարելի այն պատճառով, վոր այդ արդյունաբերությունը սոցիալիստական շինարարության համար մղվող մեր պայքարի հիմքն է, այն պատճառով, վոր այնաեղ շահագործում չկա, վորովհետև բանվոր դասակարգն ինքն իրեն շահագործել չի կարող։ Դեռ 1921 թ. Լենինն ասում եր. «Միջոցների ամրապնդման, սոցիալիստական հասարակություն ստեղծելու խնդիրը և միակ հենարանը մեկն է, ու միայն մեկը՝ այն եւ՝ խոշոր արդյունաբերությունը։ Առանց կապիտալիստական խոշոր ֆաբրիկալի, առանց բարձր մակարդակի վրա գրված խոշոր արդյունաբերության, սոցիալիզմի մասին ընդհանրապես խոսք լինել անդամ չի կարող և ավելի քիչ կարող ե խոսք լինել այդ մասին գյուղացիական լերկրի նկատմամբ, իսկ մենք Ռուսաստանում այդ բանն ավելի կոնկրետ գիտենք, քան առաջ, և խոշոր արդյունաբերության անո-

բոշական վերացված ձևերի տեղ այժմ մենք վորոշված, ճիշտ հաշված, ելելարիփիկացիալի կոնկրետ ծրագրի մասին ենք խոսում»:

Մեր ամբողջ տնտեսական սիստեմը պետկապիտալիզմ անվանել չեն կարելի նաև այն պատճառով, վոր վերջինը մեր տնտեսության սիստեմի միացն մի մասն ե, այն պատճառով, վոր ժողովրդական տնտեսության այն ճյուղերը, վորոնք կապիտալիզմի դեմ մղվող պայքարի հիմքն են հանդիսանում, ամբողջ ժողովրդական տնտեսության մեծ մասն են հանդիսանում։ Անհրաժեշտ ե հաշվի առնել այն հանգամանքը, վոր հեղափոխության տարիներում մեր տնտեսությունը զարգացել, ամրապնդվել ե։ Մինչդեռ 1921 թ. պետական տնտեսությունը համեմատաբար թույլ եր, գյուղացիական տնտեսությունը տարերային կերպով եր զարգանում և պետք եր, վոր պետկապիտալիզմն ողտագործվեր, իբրև արտադրողական ուժերի արագ զարգացմանը նպաստող միջոց, այժմ, սակայն, պատկերը դեպի լավն ե փոխվել։

Ստալինը՝ XIV համագումարում բահականիվ մղելով ոպպողիցիալի դեմ, ասում եր. «Կարելի յե, արդյոք, այժմ ասել, վոր մենք արդյունաբերություն չունենք, արանսապորաբ կանգ ե առել, վառելանցութ չկա ե ալին»—վ.ոչ, չեն կարելի:

Կարելի յե, արդյոք, ժիտել, վոր մեր արդյունաբերությունն ու առևտուրն իրենց սեփական ուժերով զյուղացիական տնտեսության հետ արդեն ինդուստրիալի (մեր ինդուստրիալի) անմիջական շաղկապ են հաստատում։—վ.ոչ, չեն կարելի։ Կարելի յե, արդյոք, ժիտել, վոր արդյունաբերության ասպարիզում «պետկապիտալիզմ» ու «սոցիալիզմ» արդեն փոխանակել են իրենց գերերը, վորովհետև սոցիալիստական արդյունաբերությունն արդեն գերիշխող ե գարձել, իսկ կոնցեսսիալի ու կապալի տեսակարար կշիռը (առաջնորդությունը 50,000 բանվոր ունի, յերկրորդը՝ 35,000) մինիմալ ե։—վ.ոչ, չեն կարելի։ Դեռ 1922 թ. Լենինն ասել ե, վոր կոնցեսսիաների ու կապալի բանը մեղնում չաջողվեց։

«Հապա սրանից բնչ ե դուրս դալիս։ Սրանից դուրս ե գալիս այն, վոր 1921 թվից այս կողմը մեղնում հանգամանքներն ենականապես փոխվել են, վոր այդ ժամանակամիջոցում մեր սոցիալիստական արդյունաբերությունն ու խորհրդագին-կոոպերատիվ առևտուրն արդեն կարողացել են գերազանց ուժ գառնալ, վոր քաղաքի ու գյուղի շաղկապն արդեն սովորել են սեփական ուժերով հաստատել, վոր պետկապիտալիզմի ավելի վառ ձևերը՝ կոնցեսսիաներն ու կապալը՝ այդ ժամանակամիջոցում լուրջ զարգա-

յուում ձեռք չեն բերել, վոր ալժմ, 1925 թ., խոսել պետկապիտապիզմի մասին, փըրկ մեր անտեսության գերազանց ձեր մասին, — նշանակուում ե՞ աղավաղել մեր պետական արդյունաբերության սոցիալիստական բնույթը, նշանակուում ե՞ չհասկանալ անցյալի և ներկայի միջև յեղած ամբողջ տարբերությունը, նշանակուում ե՞ պետկապիտապիզմի հարցին մոտենալ վոչ-տրամաբանորեն, աց՝ սխոլաստիկորեն, մետաֆիզիկորեն»։

Ոպպոզիցիան պնդում ե, վոր ՆեՊ-ը մի նահանջ ե, և չի հասկանում այն, վոր մեր տընտեսական կյանքն ու քաղաքականությունը չի կարելի վերացականորեն քննության առնել, Յեթե ՆեՊ-ը 1921 թ. նահանջ եր, ապա այդ բանն արված եր շարքերը վերակազմելու և նոր հարձակում անելու համար։

• ՆեՊ-ի տարիներում տնտեսությունը վոչ միայն վերակազմվել ե, աղև ամրապնդվել ու դարգացել ե։ Յեթե չի կարելի ասել, վոր 1921 թ. մենք դեպի կապիտալիզմն եինք վերադարձել, ապա կապիտալիզմի մասին առավել ևս չի կարելի խոսել հիմա, հինգ տարվա պայքարից հետո, այն նվաճումներից հետո, վոր մենք ունեցել ենք արդյունաբերության, կոռոպերացիայի ու առևտուրի շինարարության ասպարեզներում։ Ընդհակառակը, անցյալ տարիների տնտեսական

շինարարության հետևանքները ցուց են տալիս, թե մենք վարչակի ենք առաջ գնացել թէ՛ բոլոր արդյունաբերական ուժերի զարգացման տեսակետից և թէ՛ անտեսության սոցիալիստական ձևուղերի ուժեղացման տեսակետից՝ իհաշիվ կապիտալիզմի։

Մի յերկրում սոցիալիզմի շինարարություն կատարելու բարդ խնդիրն ե մեզ բաժին ընկել։ Հոգուտ համաշխարհացին հեղափոխության, մենք չենք կարող հարժարվել այդ նպատակից և պետք ե հաղթահարենք այդ շինարարության ճանապարհին ընկած բոլոր խոչընդուները։ Ոպպոզիցիան վորոշում ե համել, վոր սոցիալիզմի շինարարությունը մի յերկրում անհնարին ե, մանավանդ այնպիսի յերկրում, ինչպիսին մերն ե։ Պնդելով այս բանի վրա, ոպպոզիցիան յելակեա և ունեցել սխալ նախադրյաներ և սխալ յեղբակացություններ ե արել Յեթե, իրոք, մեզնում չիներ անտեսության սոցիալիստական մասի գերազանցություն, յեթե գերիշխողը լիներ կապիտալիզմը, յեթե մենք չիմանացինք գյուղացիության հետ ճիշտ կապ հաստատելու ճանապարհն ու գյուղացիական անտեսության վերակազմության մեթոդները, այդ դեպքում ոպպոզիցիան իրավացի կլիներ։ Բայց սխալ նախադրյաները սխալ յեղբակացություններ են տալիս։

ԽՍՀՄ-ը միակ յերկիրն է,ուր իշխանությունը բանվոր գտակարգին է պատկանում: Հեղափոխությունից հետո առաջին տարիներում թվում եր, թե համաշխարհային հեղափոխության վերահասությունը շատ մոտ է, և մեզ հարկավոր է միայն դիմանալ մինչև այդ մոմենտը: Բայց այժմ պարզ է, վոր կապիտալիզմի քայլայման ընթացքը դանդաղել է, և մոտ ժամանակներում հեղափոխության վրա հույս գնել չի կարելի, ու մեր առջև ծառացած է վոչ միայն մինչև վորոշ մոմենտ գիմանալու, այլ մեզնում սոցիալիստական անտեսություն կառուցելու, այդ անտեսության բոլոր ճյուղերն ամրապնդելու և զարգացնելու խնդիրը: Մենք այժմ չենք կարող իմանալ (օրիենտироваться) ուրիշ յերկիրներում լինելիք հեղափոխության մասին, այլ պետք է ինքներս մեր ուժերով մեր յերկրում սոցիալիզմ կառուցենք: Սրա ճանապարհը՝ արտադրողական ուժերի զարգացման, մեր տրամադրության տակ լեզած բոլոր հարատառթյունների ոգտագործման ճանապարհն է:

Հնարավոր է, արզոք, սոցիալիզմի շինարարությունը մեզնում, ԽՍՀՄ-ում, այն ժամանակ, յերբ ամբողջ աշխարհում կապիտալիզմն է թագավորում: Մենք անողնական չենք լինի, ար զորք, մեր կովի մեջ:—Ահա այն հարցերը, վոր

անհրաժեշտ է առաջազրել մեզ, հաշվի առնելով բոլոր այն հանդամանքները, վորոնցում խորհրդագին շինարարությունն է ընթանում: Խորհրդագին իշխանությունն ուժ տարի յէ, ինչ գոյություն ունի: Այս թվից չորս տարուց միքիչ ավելին խաղաղ շինարարությունն է ընդունվում: Այդ ամբողջ ժամանակամիջոցում արտաքին աշխարհի հետ ունեցած մեր կապը միայն առևտով է արտահայտվել: Վոչ մի փոխառություն, անտեսական վոչ մի արտոնություն մենք այնտեղից չենք ստացել: Յեվ այսպիսի հանդամանքներում մեր անտեսությունն առաջ է գնացել, տարեցարի արագացնելով իր զարգացման թափը: Այս մեկն արգեն գալիս է ասելու, վոր մեր յերկրում սոցիալիզմի շինարարությունը հնարավոր է:

Այս բանն ապահովելու համար անհրաժեշտ է յերկու պայման: 1) կապիտալիստական արտաքին աշխարհի հետ այնպիսի փոխարաբերություններ հաստատել, վորոնց ժամանակ կապիտալիստները չկարողանան ազգել անտեսությունների առանձին ճյուղերի վրա, չկարողանան մեզ խանդարել սոցիալիզմ կառուցելու գործում: 2) ոգտագործել արտադրողական ուժերի զարգացման բոլոր հնարավորությունները՝ ամբողջ ժողովրդական անտեսության պլանավիճական աշխատանքների ժամանակ, բոլոր բնական հարստու-

թունների հաշվառման և այդ հարստություններն ոգտագործելու հնարավորության ժամանակ։ Առաջին պայմանի իրագործմանը նպաստում և արտաքին առետրի մենաշնորհը, կոնցեսսիոն կոմիտեն, առետրական գաշնազրերը. իսկ յերկրորդին՝ Պետականը, բոլոր տնտեսական որդանները, ելեկտրիֆիկացիայի ծրագիրը։

Այսպիսով, մենք կարող ենք մեզնում սոցիալիզմ կառուցել հաշվի առնելով նաև այն հանգամանքը, վոր՝ Արևմուտքում հեղափոխությունը դանդաղել ե։

Հստ ԽՍՀՄ-ում յեղած բնական հարստությունների չափի, մենք հնարավորություն ունենք հզոր տնտեսություն զարգացնելու, վորն արտասահմանյան շուկաներից կախումն չի ունենա։

Մենք պետք ե ԽՍՀՄ-ը գարձնենք զարգացած և տնտեսապես անկախ մի պետություն։ Արդի կապիտալիստական աշխարհին հարուկ չփնելով, ԽՍՀՄ-ն ապագայում մտնելու յե սոցիալիստական հանրապետությունների համաշխարհային միության մեջ վոչ իբրև ավելի թուլ անդամ, այլ՝ որդանապես ամբողջ տնտեսական մի մեծություն։

Ողպողիցիան իր պլատֆորմը բանվոր դասակարգի ուժերին չհ պատալու, մեր տնտեսու-

թյան ուժերի թերահաշվառման վրա յե շինում։ Ողպողիցիայի ներկայացուցիչներից վուանք նույնիսկ առաջարկում ելին ինդուստրիացումից հրաժարվել և մեր տնտեսության զարգացումը զյուղատնտեսության զարգացման հիման վրա կառուցել, վորի արդյունքը մենք պիտի արտահանենք՝ արդյունաբերական ապրանքների հետ վոխանակելու համար։ Հարցն այսպես դնելը մեր ուժերին կատարելապես չհավատալ և հեղափոխության խնդիրները չհասկանալ ե վկացում, սոցիալիզմի շինարարությունից հրաժարվելու ձըդումն ե ցուց տալիս։

Այս գիծը մեր գիծը չի։

Կա մի ուրիշ զլիավոր գիծ, վորը յելակետ ունի այն, վոր մենք պետք ե մեր բոլոր ուժերը գործ դնենք, վորպեսզի մեր յերկիքը, — քանի դեռ գոյություն ունի կապիտալիստական ողակումը, — ներքին շուկայի վրա հենվող, տնտեսապես ինքնուրուցն մի յերկիք դարձնենք, վորը կապիտալիզմից կամաց-կամաց պոկվող և սոցիալիստական հունի մեջ ընկնող ոտար յերկրներին գեպի իրեն քաշելու մի ոջախ հանդիմանար։ Այս գիծը մեր արդյունաբերության առավելագույն զարգացումն ե պահանջում, սակայն այն միջոցների, չափով ու համապատասխան, վորոնք մեղնում գոյություն ունեն։

Այս գիծը վճռականապես ժխտում է այն քաղաքականությունը, վոր մեր յերկիրը հարուկ է դառնալու կապիտալիզմի համաշխարհացին սիստեմին։ Այս գիծը մեր շինարարության գիծն է, վորին կառչած է կուսակցությունը, վորին պետք է կառչի նաև հետագայում։ Այս գիծը պարտադիր է այնքան, քանի ուր գոյություն ունի կապիտալիստական ողակումը։

Այսպես ձևակերպեց Ստալինը մեր խնդիրները կուսակցության XIV համագումարում։ Յեզ համագումարն իր բանաձեռում պարզ կերպով հրաժարվում է հուսալքման տրամադրություններից, չթագցնելով այն վտանգները, վորոնք ծառացած են մեր առջի։ Հաշվի առնելով թե մեր շինարարական ասպարիզում ձեռք բերած նվաճումները և թե վտանգը, համագումարը հանձնարարում է կուսակցության կ. կ.-ին。—

«ա) Անկյունաքար դնել սոցիալիստական տնտեսական ձևերի ըստ ամենայնի հաղթանակն ապահովելու խնդիրն ընդդեմ մասնավոր կապիտալի, արտաքին առևտորի մենաշնորհի ամրապնդումը, սոցիալիստական պետարդյունաբերության զարգացումը և դրա դեկավարությամբ ու կոռպերացիայի ոգնությամբ գյուղացիական տընտեսությունների ավելի ու ավելի շատ մասսաներ սոցիալիստական շինարարության հունի մեջ ներգրավելը»։

բ) ԽՍՀՄ-ի համար ապահովել տնտեսական այնպիսի ինքնուրույնություն, վորը ԽՍՀՄ-ը պահպանի համաշխարհացին կապիտալիստական տնտեսության հարուկը լինելուց, վորի համար՝ յերկրի արդյունաբերականացման, արտադրության և սրա միջոցների զարգացման տնտեսական զորաշարժների ուեզերման կազմակերպման կուրս պահել։

գ) Հիմնվելով XIV կուսկոնֆերենցիայի վորոշումների վրա, ըստ ամենայնի աջակցել յերկրի արտադրության և ապրանքաշրջանառության զարգացմանը։

դ) Ոգտագործել բոլոր միջոցները, խիստ խնայողություն պահպանել պետական միջոցները ծախսելու գործում, ավելացնել պետարդյունաբերության, առևտորի և կոռպերացիայի շրջանառության արագությունը՝ սոցիալիստական կուտակման թափը բարձրացնելու համար։

ե) Ծավալել մեր սոցիալիստական արդյունաբերությունը՝ բարձրացրած տեխնիկական մակարդակի հիման վրա, սակայն, խիստ կերպով համաձայնեցնելով թե շուկայի ծավալի և թե պետության ֆինանսական հնարավորությունների հետ։

զ) Ըստ ամենայնի աջակցել խորհրդային տեղական արդյունաբերության զարգացմանը

(շրջան, վիճակ, նահանգ, մարզ, հանրապետություն), առեն տեղ խթան դարձնելով տեղական նախաձեռնությունն այդ արդյունաբերության կազմակերպման գործում, վորը հաշված է բարվարելու բնակչության այլ և այլ պահանջներն ընհանրապես և գյուղացիությանն առանձնապես.

Է.) Գյուղատնտեսության զարգացումը պաշտպանել և առաջ մղել՝ հողագործական կուլտուրայի բարձրացման, տեխնիկական կուլտուրաների զարգացման, հողագործության տեխնիկայի բարձրացման (տրակտորացում), գյուղատնտեսության կոլեկտիվացման զանազան ձևերն ըստ ամենայնի պաշտպանելու գծով»:

Այս միջոցների իրականացումը մեզ համար կապահովի տնտեսության հետագա զարգացումն ամբողջությամբ և այդ անտեսության սոցիալիստական ձևուղերի կազմակերպումն առաջին հերթին:





ԳԻՒՅ 20 ԿՈՊ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0193705

29.227